Ազգ
Azg
29 ՄԱՐՏ 2013 ՈՒՐԲԱԹ 48(5131)
ISSN: 1829-1651

# Բաքումում հանդիպեցին եւ բաժանվեցին Թուրքիայի, Վրաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարները




Երեկ Բաթումի «Շերատոն» հյուրանոցում այնուամենայնիվ կայացել է Թուրքիայի, Վրաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների հանդիպումը: Այն, սակայն, ներառյալ կարճատեւ մամուլի ասուլիսը, տեւել է ոչ ավելի, քան մեկ ժամ: Հանդիպման արդյունքներով որեւէ էական փաստաթուղթ չի ստորագրվել, ի տարբերություն նախորդ տարվա, երբ կողմերն ընդունել էին Տրապիզոնի հռչակագիրը: Այս անգամ նրանք բավարարվել են միջգերատեսչական շփումների մասին արձանագրությամբ, որով նշվում է մինչեւ 2015 թ. անելիքների շրջանակը:

Դատելով ադրբեջանական մամուլի տարածած տեղեկությունից, Էլմար Մամեդյարովը Վրաստանի եւ Թուրքիայի իր պաշտոնակիցներին «միացել է ավելի ուշ»՝ օրվա երկրորդ կեսին: Մինչ այդ Դավութօղլուն եւ Փանջիկիձեն ունեցել են առանձին հանդիպում, որն, ըստ երեւույթին, անցել է լարված մթնոլորտում: Թուրքիայի արտաքին գործերի նախարարը լրատվամիջոցների հետ հանդիպմանը ստիպված է եղել խոստովանել, որ քննարկվել է նաեւ Թուրքիայից Աբխազիա «վերջերս հաճախակի դարձած նավագնացության հետ կապված հարցը»:

Տես էջ 2

# Իլհամ Ալիեւից՝ Բաշար Ասադի՞ն

**Haqqin.az-ը, հղում անելով բրիտանական The Sunday Telegraph-ին, գրում է, որ արեւմտյան քաղաքական շրջանակներում կասկածում են, որ Ադրբեջանը «օգնություն է ցուցաբերել սիրիական ռեժիմին»: Բրիտանական թերթի տեղեկության աղբյուրը սիրիական ռազմաօդային ուժերի մի օդաչու է, որ հայտնել է, թե «անցյալ տարվա ամռանը Ադրբեջանի օդային տարածքով Ռուսաստանից Սիրիա են հասցվել տոննաներով զենք եւ փող»: Օդաչուի խոսքերով, ինքը ԻL-76 ռազմատրանսպորտային ինքնաթիռով Ռուսաստան է թռել է Սիրիա-Իրաք-Իրան-Ադրբեջան-Ռուսաստան երթուղով, «տոննաներով զենք եւ եվրոներ ու դոլարներ բարձել եւ վերադարձել»:**

**Տեղեկատվությունը խիստ անհանգստության է մատնել արտաքին քաղաքական հարցերով նախկին պետխորհրդական Վաֆա Գուլուզադեին: «Եթե սիրիական օդանավը Բաքվում վայրէջք է կատարել, լիցքավորվել, ապա ադրբեջանական իշխանությունների մեղքը մեծ է, իսկ եթե ընդամենը անցել է Ադրբեջանի օդային տարածքով, ապա դա բոլորովին այլ է. քանի որ երթուղիները նախապես համաձայնեցված են, եւ ադրբեջանական կողմը չէր կարող իմանալ, թե ինչ բեռ կա օդանավի մեջ»,- ասել է Գուլուզադեն:**

**Նրա կարծիքով, եթե արեւմտյան հատուկ ծառայությունները նման տեղեկության տիրապետել են, ապա պետք է դիմեին ադրբեջանական կողմին եւ առաջարկեին «օդանավը հարկադիր վայրէջքի տանել եւ ստուգել բեռները»: Գուլուզադեն հիշեցրել է հարավսլավական ճգնաժամի օրերից դեպք, երբ իրեն զանգել է մախային ծառայության պետն ու տեղեկացրել, որ «ստուգել են ինքնաթիռ, որտեղ Միլոշեւիչի համար երկու կործանիչ կա», իսկ ինքը զանգել է Հեյդար Ալիեւին, վերջինս էլ կարգադրել է թույլ չտալ, որ այդ օդանավը Հարավսլավիա թռչի, եւ այդ «ձեւով փրկել է Ադրբեջանի իմիջը»:**

**Գուլուզադեն կարծում է, որ «արեւմտյան գործընկերները կարող են Ադրբեջանին ճիշտ չհասկանալ, եթե բրիտանական թերթի տեղեկությունները համապատասխանում են իրականությանը»: Խնդիրն այն է, որ Սիրիայում այսօր բազմաթիվ ադրբեջանցիներ կան, որ կռվում են ընդդիմության շարքերում՝ Բաշար Ասադի դեմ: Իր ընդհանուր տրամադրվածությամբ Ադրբեջանի իշխող վարչախումբն էլ, կարծես, հակված է Ասադի դեմ գործելուն: Այս համապատկերում բրիտանական մամուլի տարածած տեղեկատվությունը կարծես չի տեղավորվում:**

**Այդ դեպքում որտեղի՞ց է արտահոսքը եւ, ամենակարեւորը, ի՞նչ է ակնարկում արեւմտյան մամուլը: Միգուցե այն, որ Իլհամ Ալիեւը սիրիական ճգնաժամում պատրաստված է սատարելու Բաշար Ասադին, քանի որ վերջինիս անկմամբ, փաստորեն, ի՞նքն է մնում Մեծ Մերձավոր Արեւելքի միակ բռնապետը: Բացառված չէ: Հասկապես ուշագրավ է, որ Իլհամ Ալիեւի կողմից Ասադին գաղտնի աջակցելու մասին գրվում է Ադրբեջանի համար նախընտրական տարում, երբ, ինչպես որոշ փորձագետներ են կարծում, «ադրբեջանական հասարակությունն արթնանում է տեւական թմբիրից»: Եվ դա շատ թափանցիկ սպառնալի՞ք է Ադրբեջանի իշխող վարչախմբին:**

# Դատական լսումներ Բերեզովսկու մահվան կապակցությամբ

Անգլիայի Վինձոր քաղաքում մարտի 28-ին նախնական լսումներ են սկսվել ռուսաստանցի գործարար Բորիս Բերեզովսկու մահվան փաստի առնչությամբ: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ դրանք անցկացվում են աշխարհի առաջատար լրատվամիջոցների լրագրողների ներկայությամբ:

Ներկայիս լսումները կոչվում են կորոներային՝ կորոներ կոչվող դատական պաշտոնատար անձի անունով, որը պարզում է մահվան հանգամանքները եւ իր դատավճիռն է կայացնում դրա պատճառների առնչությամբ: Եթե կորոներային քննությունը եզրակացնում է, որ մահը բռնի բնույթ է կրում, ապա գործը փոխանցվում է քրեական դատարանին:

Առայժմ հայտնի է, որ Լոնդոնից ոչ հեռու գտնվող եւ Բերեզովսկու նախկին կնոջը պատկանող առանձնատան լոգասենյակում Բերեզովսկու մարմինը գտել են՝ վզին հանգույց արված ինչ-որ գործվածքի պատառիկով: Մյուս պատառիկն ամրացված է եղել լոգարանի ձողին, որից սովորաբար պլաստիկե վարագույր են կախում: Այս ամենը պատմել է մարտի 23-ին՝ մահվան օրը, առաջինը լոգարան մտած ոստիկանության սպան:

Դիահերձումից հետո հայտնի է դարձել, որ Բերեզովսկու կողերից մեկը կոտրված է: Ըստ որում, մարմնի վրա որեւէ կապտուկ չի հայտնաբերվել: Այդ մասին մարտի 28-ին հաղորդել է «Գարդիան» թերթը, վկայակոչելով հանգուցյալի ընտանիքին:

Մահվան հիմնական վարկածը մնում է ինքնասպանությունը: Նախնական տվյալների համաձայն՝ մահվան պատճառը վերջնականապես պարզելու համար կպահանջվի առնվազն 6 շաբաթ, այնպես որ հուղարկավորությունը տեղի կունենա մայիսին:

Պ. Ք.

# Տաքսիների փոփոխություններն ընդունվեցին, մտահոգությունները մնացին

*Կնվազի՞ սակերն ու կկարգավորվե՞ն հաշվիչները նոր կարգի գործելուց հետո*




Հայաստանում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղեւորափոխադրման փոփոխությունները երեկ հաստատվեցին կառավարությունում: Վարչապետ **Տիգրան Սարգսյանն** այս առնչությամբ նշեց, որ ընդունված որոշումներով փոքր բիզնեսի համար ստեղծվում են ավելի բարենպաստ պայմաններ: «Եթե թվարկելու լինենք, ապա ստացվում է, որ առաջարկվող բարեփոխումն էապես մեղմացնում է միջավայրը, վճարներն են էականորեն կրճատվում, հաշվետվություններն են նվազեցվում, կարճացվում է արտոնագիր ստանալու ժամկետը, ներդրվում է «մեկ պատուհանի» սկզբունք, այսինքն բոլոր կետերը դրական են», ասաց վարչապետը: Նրա հավաստիացմամբ, ակնհայտ է, որ բողոքի ակցիա կազմակերպողներն ամենեւին էլ տաքսու վարորդները չէին, այլ որոշ սեփականատերեր, որոնց ձեռնտու չէ այս բարեփոխումը:

«Տարեկան կտրվածով մենք մասնավոր հատվածին 1,5 միլիարդ դրամ խնայողություն ենք ապահովում, իրենք ավելի հարմարավետ միջավայրում են աշխատելու, դեղին համարների համար ծախս չեն անելու. պետությունն այսուհետեւ անվճար է իրականացնելու նրանց հաշվառումը, 30 օրվա փոխարեն 5 օրվա ընթացքում ենք արտոնագիր տալու, ընդ որում՝ տարածքներում, որտեղից չգան, հասնեն Երեւան, հաշվետվություններն ենք վերացնում, բազմաթիվ անիմաստ տեխզննումները, որոնք ձեւականորեն կային, բայց չէին կատարվում, ծախսատար էին. այս ամենը վերացնում ենք: Կարեւորն այն է, որ բարեփոխումն առավելապես անապահով խավին է վերաբերում», եզրափակեց Տիգրան Սարգսյանը:

Տես էջ 2

# Փետրվարին անշարժ գույքի գործարքների քանակն աճել է

*Գներն առայժմ զգալի փոփոխություններ չեն ունեցել*

**Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2013-ի փետրվարին Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 14571 գործարք, ինչը 46,6 տոկոսով բարձր է նախորդ ամսվա՝ հունվարի եւ 1,3 տոկոսով՝ 2012-ի փետրվարի գործարքների համեմատ: Օտարման գործարքների քանակը փետրվարին հունվարին համեմատ աճել է 17,6 տոկոսով, իսկ անցյալ տարվա փետրվարի համեմատ՝ 20,8 տոկոսով: 3641 օտարման գործարքներից առքուվաճառքներինը կազմել է 74,9 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39,1 տոկոսն արձանագրվել է Երեւան քաղաքում, իսկ առքուվաճառքի գործարքների 56,8 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2013-ի հունվարի համեմատ, փետրվարին բնակարանների առքուվաճառքի գործարքների քանակը Երեւանում աճել է 25,3 տոկոսով, իսկ նախորդ տարվա փետրվարի համեմատ՝ 0,2 տոկոսով:**

**Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում այս տարվա փետրվարին հունվարի համեմատ աճել են՝ 0,6 տոկոսով: Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել.**

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | փետրվար 2012 թ. | փետրվար 2013 թ. | հունվար 2013 թ. |
| Կենտրոն | 400000 | 424100 | 422050 |
| Արաբկիր | 334000 | 352100 | 350000 |
| Քանաքեռ-Զեյթուն | 260100 | 280200 | 279100 |
| Նոր-Նորք | 225000 | 245100 | 243050 |
| Ավան | 234000 | 255000 | 255000 |
| Էրեբունի | 233400 | 245200 | 243500 |
| Շենգավիթ | 229100 | 251200 | 249100 |
| Դավթաշեն | 254600 | 269900 | 269100 |
| Աջափնյակ | 221000 | 243000 | 240500 |
| Մալաթիա-Սեբաստիա | 219800 | 235600 | 235000 |
| Նուբարաշեն | 140100 | 146200 | 145100 |
| Միջինը Երևանում (բացի Նորք-մարաշից) | 250100 | 268000 | 266400 |

Տես էջ 8

# «Ժառանգություն»-ՀՅԴ փոխպարզաբանումներ

«Ժառանգության» եւ ՀՅԴ միջեւ փոխադարձ պարզաբանումների շարք է սկսվել: ՀՅԴ խմբակցության ղեկավար **Աղվան Վարդանյանը** մեկ օր առաջ բացել էր բանակցությունների վերաբերյալ փակագծերը, նշելով, որ Երեւանի ավագանու ընտրությունները համարելով քաղաքական իրողություն, անգամ եռակողմ՝ ՀՅԴ-ԲՀԿ-«Ժառանգություն» խորհրդակցություններ էին սկսել միասնական ցուցակ ձեւավորելու առումով: Եռաչափ բանակցությունների ժամանակ ՀՅԴ-ն նախընտրելի է համարել, որ Վարդան Օսկանյանը գլխավորի ցուցակը, դրան էլ համաձայն չի եղել «Ժառանգությունը»: Ի վերջո, երբ բանակցել են արդեն «Ժառանգությունն» ու ՀՅԴ-ն, ՀՅԴ-ի առաջարկն այն է եղել, որ ցուցակը գլխավորի Րաֆֆի Հովհաննիսյանը, քանի որ քաղաքական իրադարձությանը քաղաքական կուսակցությունների ղեկավարների մակարդակով պետք է մասնակցել: Վերջինս հրաժարվել է դրանից՝ առաջարկելով, որ ՀՅԴ-ական Լիլիթ Գալստյանը գլխավորի ցուցակը, ՀՅԴ-ն առաջարկել է քաղաքական դեմք Արմեն Ռուստամյանին, ասվել է, որ ոչ ոք ՀՅԴ-ին չի կարող թելադրել, թե ով պետք է դաշնակցականներից լինի ցուցակում: Րաֆֆին ասել է, թե Արմեն Ռուստամյանն է գլխավորելու միասնական ցուցակը: Այս կարգի անհամաձայնություններից կողմերը որոշել են առանձին գնալ ընտրությունների:

Երեկ Ազատության հրապարակում այս հարցին հարկ համարեցին անդրադառնալ ե՛ւ «Ժառանգություն» կուսակցության փոխնախագահ **Արմեն Մարտիրոսյանը**՝ առավոտյա ասուլիսում, ե՛ւ խմբակցության ղեկավար **Ռուբեն Հակոբյանը**՝ երեկոյան: Ա. Մարտիրոսյանն էլ նշել էր, թե ԲՀԿ-ի հետ միասնական ցուցակով գնալը չի ստացվել, քանի որ այդ կուսակցությունն առաջարկում էր Վարդան Օսկանյանին որպես ցուցակը գլխավորողի, բացի դրանից՝ իրենք ինչ-որ մեկի առանցքի շուրջը պտտվելու խնդիր չունեին, քանի որ Րաֆֆու հաղթանակով ժողովրդի հետ են առանցք կազմել: Ու մերժել են: Իսկ ՀՅԴ-ի հետ բանակցությունները նույնպես ձախողվել են, քանի որ նրանց համար առաջնային է եղել առաջնորդների խնդիրը, ու որ՝ անպայման Րաֆֆի Հովհաննիսյանը գլխավորի ցուցակը, եթե ոչ՝ Արմեն Ռուստամյանը, եւ «Ժառանգության» հակաառաջարկը՝ Լիլիթ Գալստյանի կողմից ցուցակը գլխավորելու վերաբերյալ, մերժվել է:

Երեկ երեկոյան Ազատության հրապարակում «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ռուբեն Հակոբյանը եւս բանակցությունների խնդրին անդրադարձավ՝ նշելով, որ երբ իմացել են, թե իրենց ցուցակն այլ կուսակցությունից է մարդ գլխավորելու, իրենք շոկ են ապրել: Բայց եւ դա Ռ. Հակոբյանը համարեց նշան, որ Րաֆֆի Հովհաննիսյանն ամբիցիա չունի, ու պետք չէ այդքանից հետո մեղադրել Ր. Հովհաննիսյանին, որ նա չի նպաստել միասնական ցուցակի կազմավորմանը: Նա ոչինչ ողբերգական չտեսավ այն բանի մեջ, որ ընդդիմադիր կուսակցությունները առանձին են գնում ընտրությունների, առավել կարեւոր համարելով ընտրությունների ընթացքի միասնական վերահսկումը: Եթե տեր կանգնեն քվեներին՝ հնարավոր է նաեւ մեծամասնություն կազմել, համոզված էր նա:

**Ս. Խ.**

# Ալեքսանդր Արզումանյանը հույս ունի, որ ճանապարհային քարտեզ կձեւավորվի

«Ազատ դեմոկրատներ» կուսակցության անդամ եւ «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Ալեքսանդր Արզումանյանի կարծիքով՝ Րաֆֆի Հովհաննիսյանի եւ իշխանության մեջ սկսված երկխոսության առումով լավ կլինի, որ մինչեւ ապրիլի 9 գոնե ճանապարհային քարտեզ ձեւավորվի: Բանակցությունները եթե լինեն՝ լավ կլինի, բանակցելու հարցեր կան, եւ ընդհանրապես՝ բանակցությունները բխում են Հայաստանի շահերից:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

# Նոր ավտոբուսներ եւ անփոփոխ ուղեվարձ Երեւանում

**Երեկ Երեւանի Հանրապետության հրապարակից 52 նոր ավտոբուսներ դուրս եկան երթուղիներ: Դրանց մեծ մասը հարավկորեական «Հյունդայի» ընկերության արտադրության ավտոբուսներն էին, կային նաեւ ռուսաստանյան 10 նոր ՊԱԶ-եր: Նոր ավտոբուսները երեկվանից երթեւեկելու էին 44, 27, 46, 47, 57 համարներով: Նոր ավտոբուսների հնարավորություններին եւ ուղեւորների համար ստեղծված պայմաններին ծանոթանալու նպատակով Հանրապետության հրապարակ այցելեց Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը:**



**Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության հաղորդագրության համաձայն, 2012-ի սկզբից մինչ օրս Երեւան է ներկրվել 350 ավտոբուս, որից 90-ը՝ մասնավոր ընկերությունների կողմից, 2013-ի առաջին եռամսյակում:**

**«Նախ իմ գոհունակությունն եմ հայտնում մասնավոր ընկերություններին՝ տրանսպորտի ոլորտի բարեփոխումներին աջակցելու եւ միկրոավտոբուսների փոխարեն նոր ավտոբուսներ ներկրելու համար: Նաեւ նշեմ, որ մենք շարունակելու ենք մասնավորի հետ բանակցությունները, որպեսզի քաղաքային երթուղիները համալրենք անհրաժեշտ եւս 200-300 ավտոբուսներով՝ առկա պահանջարկը լիարժեք բավարարելու համար: Իսկ արդեն այս տարեվերջին, ընդհանուր առմամբ, մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի երթուղիներում կշահագործվի շուրջ 760 ավտոբուս», նշել է քաղաքապետը:**

**Տարոն Մարգարյանն անդրադարձել է նաեւ տրանսպորտի սակագնի բարձրացման մասին շրջանառվող խոսակցություններին. «Մենք պաշտոնապես հայտարարել ենք, որ մայրաքաղաքում հասարակական տրանսպորտի ուղեվարձի փոփոխության հարց չի քննարկվել եւ առաջիկայում էլ նման բան չի նախատեսվում: Մեր համաքաղաքացիները կարող են անհոգ լինել, ուղեվարձը մնալու է անփոփոխ»:**

**Ա. Մ.**

# Տաքսիների փոփոխությունները ընդունվեցին, մտահոգությունները մնացին

*1-ին էջից*

**Կառավարության հաստատած փոփոխություններին եւս մեկ անգամ անդրադարձավ օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի տնօրեն Արմեն Եղիազարյանը: Նա նշեց, որ Երեւանից դուրս լիցենզիաների տրամադրման կարգը կիրառվեց 1 պատուհանի սկզբունքով՝ մարզպետարանում: Այսինքն, տաքսիստներն այլեւս ստիպված չեն լինի լիցենզիա ստանալու համար Երեւան գալ:**

**Հաջորդ փոփոխությամբ տաքսիների համար նախատեսված պետական տուրքն ու հաստատագրված վճարը կդառնան մեկ միասնական արտոնագրային վճար՝ Երեւանում՝ ամսական 12 հազար դրամ, շրջաններում՝ 4 հազար դրամ: Տաքսիստները նաեւ հաշվետվություն չեն ներկայացնի՝ խնայելով ամսական 3 հազար դրամ: Դեղին համարանիշը հանելը թույլ է տալիս խնայել եւս 17 հազար դրամ: Փոխարենը անվճար կտրամադրվեն ինքնակպչող կտրոններ: Հանվել են նաեւ տրանսպորտային միջոցի կայանատեղ ունենալու, ամենօրյա բուժզննման ու տեխզննման պահանջները, ինչը թույլ կտա տաքսիստներին ամսական խնայել 10-15 հազար դրամ:**

**Հիշեցնենք, որ այս փոփոխություններին բազմիցս անդրադարձել ենք մեր թերթում: Մեր մտահոգություններից առաջինն այն էր, որ նոր կարգով ավելի դժվար կլինի տաքսիները ստվերից հանելն ու նրանց օրինական դաշտում գործելը վերահսկելը: Եթե ճանապարհային ոստիկանությունն ու տրանսպորտի եւ կապի նախարարությունը դա չէին կարողանում անել դեղին համարների դեպքում, որոնք ավելի ակնառու էին, ապա ինչպե՞ս է դա արվելու հետեւի ապակուն փակցված կտրոնների պարագայում: Նշենք, որ գործող տաքսիների մոտ 30 տոկոսն այժմ ստվերում են:**

**Երկրորդ մտահոգությունն առնչվում էր մեզ՝ սպառողներիս: Այս փոփոխությունները շահավետ լինելով տաքսիների համար, որքանո՞վ են շահավետ սպառողների համար: Արդյոք այսուհետեւ բոլոր տաքսիները կունենա՞ն հաշվիչներ, իսկ ունենալու դեպքում՝ արդյոք դրանք չե՞ն խաբի՝ նույն ճանապարհը նույն ուղեվարձի պարագայում տարբեր տաքսիներ մի քանի հարյուր դրամ տարբերությամբ տեղափոխելով, ինչպես հիմա է:**

**Այս մտահոգությունների հետ կապված ոչ մի հիմնավոր պարզաբանում կառավարության, տրանսպորտի եւ կապի նախարարության, ճանապարհային ոստիկանության եւ օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի կողմից առայժմ չի տրվել:**

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Բաքումում հանդիպեցին եւ բաժանվեցին Թուրքիայի, Վրաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարները

*1-ին էջից*

Ինչպես հայտնի է, Վրաստանի սահմանապահ ուժերն անցյալ շաբաթ կալանել եւ Փոթի էին տարել թուրքական դրոշով մի բեռնանավ, որը Աբխազիայից նավարկում էր դեպի թուրքական Տրապիզոն նավահանգիստ: Նավի անձնակազմի անդամներից չորսը Ադրբեջանի քաղաքացիներ են: Վրաստանը նավի անձնակազմի անդամներին մեղադրում է «Օկուպացված տարածքների մասին» օրենքը խախտելու մեջ: Որոշ աղբյուրներ հայտնել էին, որ վրացական կողմը «կարող է բռնագրավել թուրքական նավը»:

Թե ինչ ընթացք են ունեցել այդ խնդրով բանակցությունները, կարելի է գուշակել Բաքումում Դավութօղլուի հայտարարությունից, որ «Թուրքիան հարգել եւ հարգում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը»: Հնարավոր է, բանակցությունների ժամանակ Դավութօղլուն պարզապես վրացական կողմից ներողություն է խնդրել: Այդ է վկայում հանգամանքը, որ նա չի փորձել կատարվածը լղոզել «Աբխազիայի հետ թուրքական մասնավոր ընկերությունների տնտեսական կապերի» մասին հայտարարությամբ:

Այդուհանդերձ, Դավութօղլուն նույնիսկ չափազանց անհարմար վիճակում է «իր բարձրության վրա գտնվել»: Նա ասել է, որ Թուրքիայում «բազմահազար աբխազներ են ապրում եւ ցանկալի է, որ այդ հարցը (Աբխազիայի) խաղաղ կարգավորվի»: Ավելի վաղ մամուլում տեղեկություններ էին շրջանառվել, որ Թուրքիան «Հյուսիսային Կիպրոսի թուրքական Հանրապետության» ճանաչման դիմաց «կարող է աջակցել, որպեսզի էթնիկ աբխազները վերադառնան իրենց պատմական հայրենիք»: Ամենայն հավանականությամբ, իր երկրում բնակվող աբխազների մասին ակնարկը Դավութօղլուն արել է այն իմաստով, որ աբխազական խնդրի կարգավորման մեջ կարող է դերակատարություն ունենալ:

Իր հերթին Ադրբեջանի արտգործնախարար Մամեդյարովը Բաքումի ոչ հաջող հանդիպումը «փրկելու» նպատակով դա համարել է «Հայաստանին ուղղված հստակ ազդակ» եւ կրկնել, որ «կառուցողական լինելու դեպքում Հայաստանը կարող է միանալ տարածաշրջանային ծրագրերին», ինչից կարելի է հստակ եզրակացնել, որ եռակողմ հանդիպման ընթացքում նա փորձել է վրաց-ադրբեջանական հարաբերությունների հեռանկարը պայմանավորել Հայաստանի «տարածաշրջանային մեկուսացմանը» Վրաստանի մասնակցությամբ:

Ըստ մամուլի, կողմերը պայմանավորվել են նույն ձեւաչափով «հաջորդ հանդիպումն անցկացնել Ադրբեջանում, ամենայն հավանականությամբ՝ ընթացիկ տարվա երկրորդ կեսին»: Հանգամանքը, որ հաջորդ հանդիպման կոնկրետ վայր եւ ժամանակ պայմանավորված չէ, լրացուցիչ հիմք է տալիս ասելու, որ Բաքումում Դավութօղլուն, Փանջիկիձեն եւ Մամեդյարովը հանդիպել եւ առանց որեւէ հայտարարի գալու բաժանվել են:

**Վ. Ա.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

## Անցուդարձ

# Գնացել էիր Ջավախք, որ ի՞նչ անեիր...

*Մի բան, որ Վրաստանի պարտավորությունն է, բայց հիշեցնում են հայերը, «սասանում է» վրաց պետականության հիմքերը*

Մարտի 25-ին Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին գնացել էր Ջավախք՝ վրացերենի ուսուցման՝ «Վրացերենը որպես երկրորդ լեզու» ծրագրի իրագործման վիճակին ծանոթանալու, որ իրականացվում է 2009-ից: Իսկ ծրագրի ու վրացերենի մասին Սաակաշվիլին վերջին 4 տարվա ընթացքում այցով պատվելու մակարդակով հիշել էր միայն այն պատճառով, որ այդ մասին հիշել ու անգամ բարձրաձայնել էին ախալքալաքցիները:

«**Ազգը**» ներկայացրել է, որ մարտի 14-ին Ախալքալաքի շրջանային ժողովն իր հերթական նիստում որոշել ու դիմել էր Վրաստանի խորհրդարանին՝ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին եվրոպական խարտիայի վավերացման պահանջով, քանի որ Եվրոպայի խորհրդին միանալուն զուգընթաց Վրաստանը ստորագրել էր նշված խարտիան, սակայն այդպես էլ չի վավերացրել: Սակայն մարտի 24-ի դրությամբ դիմումը դեռ չէր ուղարկվել՝ վերջնական տեքստի պատրաստման համար:

Դիմումը դեռ չուղարկած էլ ամենայն հայկականի հարցում հակահայ կեցվածք դրսեւորելու համար մոմ վառող վրացական որոշ լրատվամիջոցներ անցան գործի: Մամուլի հարայհրոցին էլ անմիջապես արձագանքեցին քաղաքական փոքրամասնություն դարձած սաակաշվիլիականները: Ընդամենը իր իսկ ստանձնած պարտավորությունները կատարելու կոչ հանդիսացող այս դիմումը մեկնաբանվեց ընդհուպ կոչ Ջավախքի անկախացման ու Վրաստանից անջատվելու:

Անգամ սեփական դարդուցավը թողած, որ որոշների դեմքում իրենց դեմ հարուցված դատական գործեր են, սկսեցին դարդ անել, թե հայերն էլի անջատողականությունից են խոսում ու դավեր նյութում Վրաստանի պետականության դեմ: Սաակաշվիլին իր հերթին ռուսական հետքի հետ մեկտեղ վերջին շրջանում հայերից, հայկականից ու ջավախահայ ակտիվիստ Վահագն Չախալյանից զգացած վախերը ներկայացրեց, նրա ղեկավարած «Ազգային շարժման» գլխավոր քարտուղար Վանո Մերաբիշվիլին էլ փորձեց Սաակաշվիլու ասածի «պակասը» լրացնել, թե ներկայիս իշխանությունները «չեն վերահսկում իրավիճակը Ջավախքում»:

Սաակաշվիլին «Իմեդի» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում, կրկին իր գործերը մաքրագործելու նպատակով, փորձել է իրավիճակը Ջավախքում 1999-ի կտրվածքով, երբ ինքը խորհրդարանի իրավական հարցերով հանձնաժողովի նախագահն էր, ներկայացնել այնպիսին, թե «ոստիկանությունը կամ զինուժն այն ժամանակ Ջավախք մտնել իսկ չէր կարող»: Ըստ որում, ջավախքցիները, Սաակաշվիլու բնութագրմամբ, վռնդել են այն ժամանակվա պաշտպանության նախարար Դավիթ Թեւզաձեին, երբ վերջինս փորձ արեց մտնել տարածաշրջան:



ընտրություններում. հունվարի սկզբին, երբ Ջավախքում ձյան ու եղանակի խստության պատճառով մարդիկ լավագույն դեպքում տնից գոմ են գնում ու հակառակը, սաակաշվիլիական ուժերը գրեթե 100 տոկոս կողմ ձայն էին «ստանում»: Արդյունքում էլ Ջավախքի խնդիրները մնում էին չլուծված:

Մեկ այլ ապացույց էլ բերել է Մերաբիշվիլին, ներկայիս իշխանություններին նսեմացնելու նպատակով հայտարարելով, թե 3-4 տարի առաջ Ջավախքում իրավիճակը լիովին վերահսկելի էր, ասել է թե ժանդարմերիան լավ էր աշխատում. ակտիվիստները ձերբակալվում էին կամ հայտնվում հետախուզման մեջ, հայերեն գրքերը մնում էին սահմանին, հայ գործիչները՝ հայտնում «անցանկալի անձանց» սեւ ցուցակում եւ այլն:

«Երբ առաջին անգամ էի այցելում Ջավախք, այնտեղ ոչ ոք վրացերեն չէր խոսում», կրկին վերադառնալով լեզվի խնդրին՝ ներկայացրել է Սաակաշվիլին իր զարմանքը Ախալքալաքի դպրոցներից մեկում մարտի 25-ին տեղի ունեցած հանդիպմանը, մոռանալով նշել, որ խորհրդային ասված Վրաստանն այնքան անտարբեր էր Ջավախքի ու այնտեղ ապրող հայերի նկատմամբ, որ անգամ վրացերեն սովորելու խնդիր դրված չէր ու պահանջ էլ չկար: Ավելին, Ջավախքի դպրոցներում վրացերենի այնքան ուսուցիչ կար այդ ժամանակ, որքան, ասենք, հիմա Հայաստանում:

Թե ասվածը, իրականությունն ու դրա պիտակումը որտեղ են ճշմարտության առումով՝ բնավ էլ հարցի էական կողմը չէ: Էական է, որ այս ամենում էլ Սաակաշվիլին, հակառուսական իր մոլուցքին տուրք տալով, կրկին հայտարարում է, թե այն ժամանակ էլ ռուսաստանյան բազան Ախալքալաքում դրանում մասնակից էր ու թեեւ հեռացվեց Վրաստանից, «սակայն պետական հետախուզական վարչության գործակալական ցանցը մնաց»:

Վրաստանի դեռեւս նախագահի Սաակաշվիլու մատուցմամբ՝ 2006-2007-ից իր ղեկավարած իշխանությունը սկսել է աշխատել Ջավախքի ժողովրդի հետ, ոչ թե տեղի հեղինակությունների, սակայն իրականում հենց տեղական հեղինակություն ասվածներն էլ Սաակաշվիլու ռեժիմի վառ պաշտպաններն էին ու հիմնական պաշտոններ զբաղեցնողները, որոնց ջանքերն այնքան ցցուն արդյունքներ էին «ապահովում» Սաակաշվիլու համար կարեւոր

*Տես էջ 4*



# Տնակաբնակներին աջակցել են վառելափայտով

Շիրակում, Գյումրիում ձմեռները խիստ են ու երկարատեւ: Մարտ ամիսն ավարտվում է, բայց այստեղ դեռ առանց ջեռուցման, առանց բնակարանը տաքացնելու յոլա չես գնա: Իսկ դա մեր օրերում լուրջ խնդիր է շատ ու շատ ընտանիքների, առավել եւս՝ թիթեղյա տնակների ու այլ ժամանակավոր կացարանների սոցիալապես անապահով բնակիչների համար:

Գյումրու «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպությունն օրեր առաջ է ավարտել քաղաքի տնակային ավաններում ու կիսախարխուլ շենք-շինություններում բնակվող առավել անապահով ընտանիքներին լոսանջելեսյան մի հեռուստամարաթոնի ժամանակ ամերիկահայ մեր հայրենակիցների հանգանակած միջոցներով գնված վառելափայտի տրամադրման բարեգործական ձեռնարկը: Բաժանված վառելիքը, որը կենտրոնի աշխատակիցներն իրենք են պարկերով հասցրել մինչեւ բնակիչների կացարանները, թեեւ վերջիններիս ձմռան ջեռուցման ամբողջ հոգսը չի հոգացել, այնուամենայնիվ որոշակի աջակցություն է եղել նրանց: Անցած ամիսների ընթացքում քաղաքի անօթեւան եւ առավել կարիքավոր շուրջ 200 ընտանիքների տրամադրվել է 1500 պարկ վառելափայտ, տասնյակ ընտանիքների էլ հատկացվել է էլեկտրական էներգիայի եւ գազի վարձավճարի գումար մեկ ամսվա համար:

«Շիրակ կենտրոնը» շարունակում է հանդես գալ տնակային ավաններում բնակվող, սոցիալապես առավել խոցելի ընտանիքներին աջակցության նաեւ մի շարք այլ ծրագրերով:

# Հաշմանդամների խնամքի կենտրոնը՝ այս տարի

Գյումրու «Անի» թաղամասի 15-րդ փողոցը քաղաքի համայնքային ավագանու մարտի 12-ի որոշմամբ վերանվանվել է Ֆորարլբերգի փողոց՝ ի գնահատումն Շիրակի մարզկենտրոնի հետերկրաշարժյան վերականգնման գործում Ավստրիայի այդ վարչական շրջանի ունեցած նկատելի ներդրման: Այդ ներդրման առավել հայտնի արտահայտություններից են այստեղ կառուցված Ավստրիական թաղամասը, Ավստրիական մանկական հիվանդանոցը: Ավստրիացի հովանավորների միջոցով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը հանրապետությունում նաեւ մի շարք սոցիալական ու առողջապահական ծրագրեր է կյանքի կոչել:

Շուտով այս ամենին կավելանա հաշմանդամների խնամքի կենտրոնի կառուցումն ու գործունեությունը Գյումրիում, Պարույր Սեւակի եւ նշված Ֆորարլբերգի փողոցի խաչմերուկին հարող 30 հազար խմ մակերեսով տարածքում: Դեռ անցյալ տարվա ամռանն այստեղ կատարվել են տարածքի հարթեցման աշխատանքներ, իսկ շինարարությունը կծավալվի առաջիկա ապրիլ ամսին: Կենտրոնը ծառայելու է հաշմանդամություն ունեցող 5-35 տարեկան 100 անձանց՝ մատուցելով բազմաբնույթ բուժական, զարգացման ծառայություններ, արհեստագործական դասընթացներ, ունենալու է այլընտրանքային ջեռուցման եւ էլեկտրասնուցման համակարգեր: Կից տարածքում նաեւ հիմնվելու է այգի ու խաղահրապարակ, որոնց մուտքն ազատ կլինի նաեւ թաղամասի բնակիչների համար:

Հաշմանդամների խնամքի կենտրոնի հիմնալցման եւ ներքնահարկի կառուցման աշխատանքները նախատեսվում է կատարել մինչեւ օգոստոս ամիսը, իսկ շենքի կառուցումը կատարվելու է Ավստրիայից բերված մասերի հավաքման տեխնոլոգիայով եւ տեւելու է մոտ երեք շաբաթ:

**Գ. Մ.**

# Տոհմածառերի մրցույթ

«Համահայկական տոհմածառ նախագիծը» հայտարարում է ամենամեծ եւ ամենահին տոհմածառերի մրցույթ, որի մասնակիցները պետք է ներկայացնեն իրենց պապերից հասած տոհմածառերը, իսկ որպես մրցանակ կստանան տոհմածառի անվճար ձեւավորման հնարավորություն: Ամեն մարդու համար շատ կարեւոր է իմանալ իր տոհմի պատմությունը, պահպանել այն եւ փոխանցել սերնդե սերունդ: Բոլոր ցանկացողներն իրենց տոհմածառերը կարող են ուղարկել contest@armenian-familytree.com էլեկտրոնային հասցեին:

Տոհմածառերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2013թ. ապրիլի 25-ը:

# Սննդամթերքը Հայաստանից հիմնականում արտահանվում է Վրաստան եւ Ռուսաստան

*«Ամերիայի» հետազոտության արդյունքները*

«Ամերիայի» հերթական հետազոտությունը նվիրված է սննդամթերքի՝ ներառյալ խմիչք, ծխախոտ, արտադրության ոլորտին:

Սննդամթերքի, խմիչքի եւ ծխախոտի արտադրությունն ըստ մարզերի ուսումնասիրելիս պարզվում է, որ արտադրանքի 49%-ը բաժին է ընկնում Երեւանին, 13 %-ը՝ Արարատի մարզին, 13%-ը՝ Կոտայքի մարզին, 8%-ը՝ Շիրակի մարզին, 4%-ը՝ Լոռու մարզին, 3-ական տոկոս՝ Արագածոտնի եւ Արմավիրի մարզերին, 2-ական տոկոս՝ Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց ձորի մարզերին եւ 1%՝ Տավուշի մարզին:

Հայաստանում սննդամթերքի արտադրությունն ունի իր ուրույն տեղն ու դերը վերամշակող արդյունաբերության մեջ: 2012թ.-ի տվյալներով՝ սննդամթերքի արտադրությունը կազմել է վերամշակող արդյունաբերության 36%-ը, խմիչքների արտադրությունը՝14%-ը, իսկ ծխախոտի արտադրությունը՝ 4%-ը:

Արտաքին առեւտրի կառուցվածքն ուսումնասիրելիս բացահայտվում են շատ ուշագրավ փաստեր: Այսպես՝ Վրաստանի տեսակարար կշիռը ճյուղի ընդհանուր արտահանման մեջ չնայած կազմում է ընդամենը 7.5%, այնուամենայնիվ այն ամենադիվերսիֆիկացվածն է արտադրատեսակների տեսանկյունից եւ ամենաշատ ապրանքախմբերով է համարվում հիմնական գործընկեր երկիր: Մասնավորապես, միսն ու մսամթերքը, սննդարդյունաբերության մնացորդներն ու պատրաստի անասնակերն արտահանվում են միայն Վրաստան, արտադրված շաքարի եւ շաքարից հրուշակեղենի արտահանման 99%-ը արտահանվում է Վրաստան, իսկ մեկ տոկոսը՝ ԱՄՆ, ցորենից, ալյուրից, օսլայից եւ կաթից պատրաստված ապրանքների արտահանման 79%-ը դարձյալ բաժին է ընկնում Վրաստանին: Այս շարքը երկար է եւ ընդգրկում է տարատեսակ ապրանքներ: Նման ակտիվ համագործակցության հիմնական պատճառներն են գրեթե միակ սահմանակից երկիր լինելը, որը ենթադրում է համեմատաբար փոքր ճանապարհածախս, ժամանակի խնայողություն, բացի դրանից՝ արտահանման մի մասն էլ վերաարտահանվում է, իսկ որոշ ենթաճյուղերում առկա է նաեւ հայկական արտադրանքի մրցունակությունը:

Սննդամթերքի արտադրանքի մասով ամբողջ արտահանման մեջ Ռուսաստանի գծով գերակշռում է ոգելից խմիչքների, մասնավորապես՝ կոնյակ, գինի, մեծ տեսակարար կշիռը: Հայաստանից ոգելից, ոչ ոգելից ըմպելիքների եւ քացախի արտահանման 73%-ը բաժին է ընկնում Ռուսաստանին:

Ամերիայի փորձագետների կանխատեսմամբ՝ սննդամթերքի արտադրության ծավալները 2012թ. համեմատությամբ 2015թ. կաճեն 19 %-ով, նույն ժամանակահատվածում խմիչքների արտադրությունը կաճի 46%-ով, իսկ ծխախոտի արտադրությունը՝27%-ով:

# Եվրասիական ինտեգրման տնտեսական կողմնորոշիչը

Վերջին վեց ամիսների ընթացքում եվրասիական ինտեգրման գործընթացի շուրջը տարբեր մակարդակներում ծավալվող քննարկումները ցույց տվեցին, որ առաջնահերթ խնդիրներից մեկը բացահայտելն ու շահագրգիռ հասարակություններին ներկայացնելն է այդ գործընթացի տնտեսական բաղադրիչը: Հետխորհրդային երկրներում տեւական լեթարգիական քնից հետո կարծես վերհիշեցին եւ վերստին ընդունեցին, որ աշխարհի մեկ վեցերորդ մասում անցած հարյուրամյակների ընթացքում իսկապես ձեւավորվել են աշխարհայացքային ընդհանրություններ, ընդհանուր ավանդույթներ, բազմազգ ու բազմակրոն հասարակությունների միջեւ հարեւանության եւ համակեցության սկզբունքներ: Պարզ դարձավ նաեւ, որ նախկին Խորհրդային Միության փլատակների վրա բարձրացած անկախ պետությունները համաձայն չեն կորցնելու իրենց ազգային ինքնիշխանությունը, սակայն միաժամանակ ցանկանում են գտնել ռացիոնալ ուղիներ՝ քաղաքացիների կենսամակարդակը բարձրացնելու եւ իրենց տնտեսությունները զարգացնելու համար: Հենց այս պայմաններում ձեւավորվեց այն ըմբռնումը, որ ամենամեծ դասը, որը կարելի է քաղել եվրոպական ինտեգրման գործընթացի պատմությունից՝ ինտեգրվող պետությունների տնտեսական ներուժը մեկ ընդհանուր շուկայում միավորելու փորձի ուսումնասիրությունն է: Ավելի պարզ ասած, եթե գտնվեն այն տնտեսական լծակները, որոնք կարող են տանել դեպի չօգտագործված տնտեսական ռեսուրսների բացահայտում, ապա եվրասիական ինտեգրման ճանապարհին կանգնած ամենածանր պատնեշները կարելի կլինի քանդված համարել:

## Ո՞րն է ինտեգրման գործընթացի ամենաարդյունավետ ճանապարհը

Ինչպես ցույց են տալիս ռուս, բելառուս եւ ղազախ փորձագետների ուսումնասիրությունները, տնտեսական ոլորտում եվրասիական ինտեգրման գլխավոր խնդիրը կողմնորոշվելն է երկու ձեւավորված մոտեցումների միջեւ: Այդ երկու մոտեցումներն էլ ունեն դրական եւ բացասական կողմեր, առայժմ մինչեւ վերջ անվիճելի չեն եւ ենթակա են հետագա ուսումնասիրության: Առաջին մոտեցումը հանգում է հետեւյալին. այն բանից հետո, երբ Ռուսաստանը, Բելառուսն ու Ղազախստանը կհռչակեն Եվրասիական միության ստեղծումը, օրակարգ կմտնի մյուս թեկնածու երկրների անդամակցության հնարավորությունը ուսումնասիրելու հարցը: Այդ երկրների շարքում առաջին տեղում են Ղրղզստանը եւ Տաջիկստանը: Եվրասիական միության հետ ամենասերտ համագործակցության հնարավորություններ են փնտրում Հայաստանում եւ Մոլդովայում: Ռուսաստանը բավական կոշտ դիրքորոշումներ է որդեգրել Ուկրաինային իր կողմը թեքելու համար, սակայն այդ քայլերը որեւէ արդյունքի դեռեւս չեն հանգեցրել: Այս պայմաններում ռուս տնտեսագետ-ինտելեկտուալների շրջաններում ձեւավորվել է մի մոտեցում, ըստ որի վերոհիշյալ գործընկերները Եվրասիական միության հետ իրենց համագործակցությունը կզարգացնեն տարբեր միջոցներով եւ տարբեր մակարդակներում, աչքի առաջ ունենալով ավելի մեծ հեռանկարում միությանը անդամակցելու տեսլականը: Այս տեսակետի կողմնակիցները հիշեցնում են, որ Եվրոպական միությունը ունի նման հարաբերություններ իր անդամ չհանդիսացող Շվեյցարիայի եւ Նորվեգիայի հետ հարաբերություններում: Ընդ որում Նորվեգիան, որն աշխարհի ամենահարուստ պետություններից մեկն է եւ շատ զգայուն է վերաբերում իր ազգային անկախությունը կորցնելու վտանգին, նույնիսկ վճարումներ է կատարում Եվրամիության բյուջե, որով փաստորեն իր համակրանքն ու միասնությունն է արտահայտում նրա հետ, չդառնալով միության լիարժեք անդամ: Նույնը որոշակի վերապահումով վերաբերում է նաեւ Շվեյցարիային, որտեղ համաշխարհային ֆինանսական կենտրոն լինելու եւ քաղաքական անկախությունը պահպանելու մոտեցումները կազմում են մեկ ամբողջություն:

Վերոհիշյալ թեզի կողմնակիցները գտնում են, որ փոքր պետությունները, որոնց տնտեսությունները համեմատած մյուսների հետ ավելի թույլ են, իսկ աշխարհաքաղաքական պայմանները՝ ավելի բարդ, պետք է իրենք որոշեն, թե երբ, ինչ հնարավորություններով եւ զիջումների ինչ փաթեթով են պատրաստվում միանալ Եվրասիական միությանը: Երկրորդ մոտեցման կողմնակիցները համոզված են, որ տարաժամկետ ինտեգրման պայմաններում լիարժեք անդամ-պետությունները եւ համագործակցող կամ թեկնածու երկրները չեն կարող ունենալ հավասար ձայնի իրավունք որոշումների կայացման գործընթացում: Եվ նրանք նույնպես հղում են կատարում դեպի Եվրոպական միությունը, որտեղ քաղաքական որոշումների ընդունման շատ հարցերում գերմանացիները, իտալացիները, չեխերն ու լյուքսեմբուրգցիները ունեն հավասար իրավունքներ: Իսկ սա նշանակում է, որ եթե Ռուսաստանը, Բելառուսը եւ Ղազախստանը հավասար ձայնի իրավունք տան միության անդամ չհանդիսացող իրենց գործընկերներին, ապա դա կլինի անբնական կամ, այլ կերպ ասած, մեծը փոքրին ենթարկելու փորձ: Այս մոտեցման կողմնակիցները պնդում են, որ հետխորհրդային տարածքի մյուս պետությունները պետք է ավելի արագ ձեւավորեն իրենց մոտեցումները եւ որոշեն՝ անդամակցո՞ւմ են արդյոք Եվրասիական միությանը արդեն այս փուլում: Այս փուլում, որովհետեւ նրանց՝ Եվասիական միության հետ համագործակցելու ապագա փորձերը, միեւնույն է, հանգեցնելու են ազգային ինքնիշխանության մի մասի կորստին, ինչպես որ դա պատահել է եվրոյի գոտում հայտնված, ասենք, արեւելաեվրոպական երկրների պարագայում: Կրկնենք, որ այս երկու մոտեցումներն էլ քաղաքական դաշտում ունեն ազդեցիկ հովանավորներ, որոնք էլ խրախուսում են այս ուղղությամբ կատարվող տնտեսագիտական եւ քաղաքագիտական ուսումնասիրությունները: Քաղաքական բարձր հեղինակություն վայելող այս շրջանակները փորձում են նաեւ այս կերպ պարզեցնել Եվրասիական միության ձեւավորման տարբեր սցենարների դեպքում իրենց անելիքը:

## Ի՞նչ է հուշում Եվրոպական միության փորձը

Եվրոպական միությունը անցյալ դարի 70-ական թթ. սկսած տարբեր մակարդակի հարաբերություններ է հաստատել աշխարհի տարբեր պետությունների հետ, որոնք խնդիր են դրել ավելի սերտ ինտեգրվել նրա հետ եւ օգտվել Եվրոմիության ընձեռած տնտեսական բարիքներից: Այս երկրների հետ հարաբերությունների հարցում, մոտ քսան տարվա ընթացքում, Եվրոպական միությունը մշակեց այսպես կոչված «քաղաքական նպատակահարմարության» մոտեցումը, ըստ որի նա ավելի սերտ է համագործակցում այն պետությունների հետ, որոնք ընդունում են իր թելադրած խաղի կանոնները եւ աշխարհայացքային մոտեցումները եւ, անշուշտ, աշխարհաքաղաքական ու քաղաքական արժեք են ներկայացնում ԵՄ-ի համար: Այդպես է եղել թե՛ Հյուսիսային Աֆրիկայի երկրների, թե՛ Բալկանյան երկրների եւ թե արեւելյան երկրների գործընկերների պարագայում:

Եվրասիական միության դեպքում, ինչպես վկայում են բազմաթիվ փորձագետներ, փորձ է արվում մի քանի տասնամյակների եվրոպական փորձը փոխառել մի քանի տարում, նկատի ունենալով հենց այն աշխարհայացքային եւ արժեհամակարգային ընդհանրությունները, որոնց մասին արդեն ասել ենք: Հետեւաբար, Եվրոպական միության փորձի ուսումնասիրությունը դառնում է շատ կարեւոր: Ընդ որում՝ ինքնուրույն ուսումնասիրությունը, որովհետեւ սպասել, որ Բրյուսելից անկեղծորեն կմատուցեն պատմության ստվերոտ էջերը, բավական միամիտ բան կլիներ:

Հետխորհրդային տարածքի եվրոպական հատվածի երկրների առջեւ կանգնած խնդիրը բավականին պարզվել է: Օրինակ՝ Ուկրաինայում սպասում են տարեվերջին, երբ իրենց երկրին ԵՄ-ի Վիլնյուսյան գագաթաժողովում կընդունեն իբրեւ ասոցիացված անդամի: Նույնը ակնկալում են նաեւ Հայաստանի պարագայում: Մյուս կողմից, սակայն, Ուկրաինայի քաղաքական վերնախավը հստակ գիտակցում է, որ բնակչության հայտնի գնողունակության եւ հայտնի կենսամակարդակի պայմաններում այդ քայլից հետո ռուսական գազի գնի բարձրացումը կարող է աղետալի հետեւանքներ թողնել Ուկրաինայի քաղաքական-տնտեսական համակարգի վրա: Եվրոպական միությունում առայժմ չեն քննարկում Եվրասիական միության հռչակման դեպքում այդ նոր տարածաշրջանային կառույցի հետ հարաբերությունների հարցը, ասելով, թե դժվար է խոսել մի բանի մասին, որը դեռեւս չկա: Սակայն Եվրոպական միությունում չեն խրախուսում եւ երբեք չեն խրախուսելու Ռուսաստանին պաշտոնական Բրյուսելի հետ ռազմավարական-գործընկերային հարաբերություններ հաստատելու ցանկության համար: Հասկանալի է, որ խնդիրը Ռուսաստանի եւ Հայաստանի, հավասարապես եւ մյուսների առջեւ, նույնն է: Իրավական դաշտը նույնացնել եվրոպականի հետ: Մի պարտավորություն, որը Ռուսաստանը կարծես թե ստանձնել է ժամանակին՝ Եվրոպայի խորհրդի անդամ դառնալով: Սակայն անցած տարիների ընթացքում օբյեկտիվ եւ սուբյեկտիվ բնույթի դժվարությունների հանդիպելով՝ Ռուսաստանը փորձում է համախմբել իր ավանդական դաշնակիցներին ԵՄ-ի հետ բանակցություններում ավելի շահեկան դիրքեր ստանալու նպատակով:

## Որտե՞ղ փնտրենք մեր շահը՝ անկեղծ մնալով

Հայաստանի Հանրապետության վերջին քսան տարիների աշխարհաքաղաքական իրողություններից բխող խնդիրները քաջ հայտնի են, եւ դրանց վրա այս հոդվածում չարժե ծանրանալ: Առիթից առիթ Հայաստան եկող եւ հայ պաշտոնյաների հետ հանդիպող ռուսաստանցի, բելառուս եւ ղազախստանցի պաշտոնյաներն ու փորձագետները համոզված են, որ անբարենպաստ պայմաններում ապրող եւ զարգանալ փորձող մեր պետությանը բացարձակ իմաստ չունի թեւերը ոլորելով որեւէ միության մեջ մտցնել: Մյուս կողմից, ավելի շոշափելի է դարձել այն հույսը, որ Հարավային Կովկասում զարգացող քաղաքական գործընթացները եւ, մասնավորապես, արդի քաղաքական գործողությունները Վրաստանում տեղ են թողնում գլոբալ ինտեգրման գործընթացներում ավելի անցավ եւ ավելի շահավետ մասնակցության համար: Ռուսաստանցի քաղաքագետները միակարծիք են այն հարցում, որ գլոբալ միաբեւեռ համակարգին այսօր արդեն փոխարինել է բազմաբեւեռ աշխարհը, իսկ հեռանկարը՝ տարածաշրջանային տնտեսական-քաղաքական միավորումներինն է, որոնք գալու են միս ու արյուն հաղորդելու արդեն ձեւավորված այդ բեւեռներին: Նախագահ Սերժ Սարգսյանը, վերջերս պատասխանելով լրագրողների հարցերին, ասաց. «Մի բան ձեզ պետք է ասեմ՝ մի հավատացեք բոլոր այն մարդկանց, հանդես գան նրանք լրատվամիջոցներում թե հանրահավաքներում, խոհանոցներում թե թատրոններում, միեւնույն է, մի հավատացեք նրանց, ովքեր ասում են, որ ռուսները մեզ պարտադրում են դառնալ Մաքսային միության անդամ: Չկա այդպիսի բան: Որքա՞ն կարելի է կրկնել: Մենք հակառակը կարող ենք ասել՝ Մաքսային միության անդամները դեռեւս ցանկություն չունեն որեւէ մեկին ներգրավելու, գոնե մեր մասով ես չեմ տեսել այդպիսի ցանկություն»:

Այդ հանգամանքը գալիս է հանդարտեցնելու տարբեր կողմերից լսվող անհանգստությունները, թե Հայաստանին հակառակ իր կամքի կարող են այս կամ այն բլոկի անդամ դարձնել, սակայն, մյուս կողմից, բոլորովին էլ չի նսեմացնում այն ըմբռնումը, որ ժամանակակից աշխարհում առանց տնտեսական քաղաքական գերհզոր միավորումներին անդամակցելու դժվար է պատկերացնել որեւէ էական տնտեսական աճ: Ղազախ նշանավոր տնտեսագետներից մեկը ասել է, թե իր համար բոլոր հասկանալի բարդություններով հանդերձ, Մաքսային միությանը չանդամակցելու դեպքում, հետխորհրդային պետությունները վաղ թե ուշ կկորցնեն իրենց քաղաքական անկախությունը: Թե որքանով է կատեգորիկ առայժմ ճշմարիտ թվացող այս դատողությունը, կտեսնենք առաջիկայում:

**ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ**

*Քաղաքական վերլուծաբան, քաղաքական գիտությունների թեկնածու*

ԻՆՉՊԻՍԻ «ԻՆՏԵԳՐՈՒՄ»

# Գնացել էիր Ջավախք, որ ի՞նչ անեիր...

*3-րդ էջից*

**Որեւէ երկրում ապրելու նախապայմաններից մեկն էլ այդ երկրի պետական լեզվին տիրապետելն է, բայց դա չի կարող ինքնանպատակ պահանջ լինել, ինչպես ինքնանպատակ չէ հայերենին տարածաշրջանային լեզվի կարգավիճակ տրամադրելու պահանջը. այն իր գոյության բոլոր հիմքերն ունի:**

**«Վրաստանում գլխավորը վրացերենն է», հայտարարել է Սաակաշվիլին, թեեւ, որքան կարող ենք դատել, որեւէ մեկը հակառակը չի էլ պնդել: Սաակաշվիլու խոսքերով, «նպատակը հայերենի դուրսմղումը չէ, այլ որ վրացերենը լինի Ջավախքի երիտասարդության հաջողության հասնելու լեզուն»:**

**Այս ամենով հանդերձ, Սաակաշվիլին առաջ, հետո, ներկա ու թերեւս ապագա իր բոլոր զբաղեցրած պաշտոնների համար հայտարարում է, թե միշտ է դեմ եղել խնդրո առարկա խարտիայի վավերացմանը, իբր դա կվնասի Վրաստանին: Մյուս կողմից էլ, Ջավախք այցելությանը Սաակաշվիլին, իրեն հատուկ պոպուլիստական մոտեցմամբ, հայտարարում է, թե էթնիկ հայերը պետք է ինտեգրվեն վրացերենի միջոցով: Ստացվում է, որ եթե խարտիան, ըստ Սաակաշվիլու, չպետք է վավերացվի, հայերին մնում է միայն վրացերենը, որ այդ երկրում «հաջողության» հասնե՞ն:**

**Սաակաշվիլու իրական մտահոգությունները ի հայտ են գալիս ոչ թե այս համատեքստում, այլ Ջավախքում արված մեկ այլ հայտարարությամբ, թե խորհրդային տարիներին Ջավախքը ռուսականացվում էր, իսկ հիմա «լեզվի, համալսարանական կրթության ու երկաթգծի» միջոցով հայերը պետք է ինտեգրվեն Վրաստանում:**

**Այս պարագայում հետաքրքրական կլինի, թե, ասենք, մի 10 տարի հետո քանի հայ Վրաստանում կհայտնվի որեւէ ղեկավար պաշտոնում, ինչպիսի պաշտոնյաներ արդեն տասնամյակներ գոյություն չունեն: Վերջին շրջանի միակ օրինակը ներկայացնող Վրաստանի նախագահի խորհրդական Վան Բայբուրդի պարագայում էլ, ինչպես ասում են, ավելի լավ է այդ պոստում չլիներ, քանի որ վերջինս ոչ միայն «անցանկալի» է որակում խարտիայի վավերացումը, այլեւ «համոզված է», թե Վրաստանում հայերը վրացիներին հավասար իրավունքներ ունեն:**

**Ամեն դեպքում, որքան էլ աջն ու ձախը ներկայացվեն ու մեկնաբանվեն, հիմնականն այն է, որ Ախալքալաքի շրջանային ժողովի «պատմական» որոշումը խցկվել է Սաակաշվիլու եւ Վրաստանի ներկայիս վարչապետ Բիձինա Իվանիշվիլու «արանքը»՝ ավելացնելով առանց այդ էլ մեծ ճեղքը երկու կողմերի հարաբերություններում: Այն ժամանակ, երբ Սաակաշվիլին ու իր թիմը ներկա իշխանություններին մեղադրում են «հայ ազգայնականներին ծառայելու» մեջ, Իվանիշվիլին ու իր թիմն էլ հիշեցնում են, որ «Հռոմի պապից ավելի կաթոլիկ երեւալու» ցանկությամբ հենց Սաակաշվիլին է 1999-ին նախաձեռնել եվրոպական խարտիային միանալու գործընթացը:**

**Տարբեր ուժերի շահերի բախման խաչմերուկում, սակայն, կարեւոր է, որ հայերի՝ որպես Վրաստանի քաղաքացիների իրավունքները լինեն պաշտպանված:**

**ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

# Թուրք-իսրայելական հարաբերությունները դեռեւս վերականգնվում են

## *Թուրքերն ի դեմս հայերի քավության նոխազ են որոնում՝ հնարավոր ուրման պատասխանատվությունը բարդելու համար*

Ինչպես նշել էինք մարտի 27-ի համարում, Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ հեռախոսազրույցի ընթացքում ներողություն էր խնդրել թուրք ժողովրդից: Ընդ որում, այդ ներողությունը բանավոր էր, նա խնդրում էր ոչ թե Գազայի հասված մարդասիրական օգնություն տանող «Մավի Մարմարա» նավի վրա միջազգային ջրերում իրականացված հարձակման, այլեւ տախտակամածում իսրայելական հատուկջոկատայինների թույլ տված սխալների համար, որոնք 9 թուրքի սպանության պատճառ էին դարձել:

Ակնհայտ է, որ բանավոր ներողությունը Իսրայել պետությանը չի վերաբերում, բայց եւ այնպես առ այսօր առեղծված է մնում՝ վարչապետ Նաթանյահուն ում անունից է խնդրել՝ ի՞ր, թե՞ կառավարության: Ներողությունը նրան ԱՄՆ նախագահ Բարաք Օբամա՞ն է պարտադրել, թե՞ Էրդողանի կառավարությունը ներողության դիմաց պարտավորվել է Սիրիայի, Իրաքի եւ Իրանի դեմ աջակցել Իսրայելին:

Այլ կերպ, որքան էլ վարչապետ Էրդողանը «Իսրայելին թուրք ազգի առջեւ ծնկի բերելու» մասին հայտարարի, իսկ նրա «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության պատգամավորները Նաթանյահուի ներողությունը համարեն Թուրքիայի դիվանագիտական հաղթանակը, այդ ընթացքում միջազգային լրատվամիջոցները ի լուր աշխարհի բացականչեն, թե վերականգնվել են թուրք-իսրայելական հարաբերությունները, ներողության նկատմամբ ամենեւին միանշանակ չէ Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի մոտեցումը: Այդ իսկ պատճառով էլ չեն դադարում Մեջլիսի նախագահությանն ուղղված հարցումները:

Մարտի 25-ին Ժողովրդա-հանրապետական կուսակցության պատգամավոր, Մեջլիսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի խոսնակ Օսման Քորութուրքը հարցումով դիմել էր արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուին: 2 օր անց մեկ այլ հարցում էլ ներկայացրել է նույն կուսակցության պատգամավոր Ալի Ռիզա Օզթյուրքը, պահանջելով, որ պատասխանի պաշտպանության նախարար Իսմեթ Յըլմազը:

Նա հարցման համար հիմք է ընդունել «Մոսսադի» կայքէջի համարում ունեցող DEBKA-ում հրապարակված մեկնաբանությունը, որտեղ ասված է. «Թուրքիա-Իսրայել հարաբերությունների ընդհատումը հանգեցնում է ԱՄՆ-ի տարածաշրջանային ծրագրերի խափանմանը: Նախագահ Օբաման, ապահովելով այդ հարաբերությունների վերականգնումը, ստեղծեց Սիրիայում նախատեսվող ամերիկյան ծրագրերի իրականացման նախադրյալները, որովհետեւ թուրքական բանակը առանց Իսրայելի տեխնիկական աջակցության մեծապես կորցնում է երկրի սահմաններից դուրս ռազմական գործողություններ իրականացնելու կարողությունը: Վաշինգտոնը Իսրայելի վարչապետին ստիպել է ներողություն խնդրել, որպեսզի ճանապարհ հարթի Սիրիայի դեմ համատեղ գործողություններ իրականացնելու համար: Դրանով Օբաման միաժամանակ նախադրյալներ ստեղծեց, որ ԱՄՆ-ի գլխավորությամբ Թուրքիա-Իսրայել-Հորդանան ռազմական համատեղ գործողություններ իրականացվեն»:

Հիմք ընդունելով այս տողերը՝ ընդդիմադիր պատգամավորը հարցնում է.

1. Ճի՞շտ են արդյոք «Մոսսադի» կայքէջ DEBKA-ում տեղ գտած պնդումները:
2. Առանց Իսրայելի տեխնիկական աջակցության թուրքական բանակը կորցնո՞ւմ է արտերկրում ռազմական գործողություններ ծավալելու կարողությունը:
3. Իրականությանը համապատասխանո՞ւմ է այն պնդումը, թե մեծարգո Օբաման Իսրայելի վարչապետին ստիպել է ներողություն խնդրել, ելնելով Սիրիայի դեմ համատեղ գործողություններ իրականացնելու ծրագրից:
4. Ճի՞շտ է, որ առաջիկա օրերին նախատեսվում է ԱՄՆ-ի գլխավորությամբ Թուրքիա-Իսրայել-Հորդանան համատեղ գործողությունների իրականացում:

Թուրքիայի պաշտպանության նախարարը կպատասխանի՞ հարցերին, թե ոչ՝ չգիտենք: Բայց որ հարցումներն ինքնին վկայում են թուրք-իսրայելական հարաբերությունների վերականգնման հեղհեղուկության մասին, ակնհայտ է: Ըստ երեւույթին, հարաբերությունների համանման ընթացքը մտահոգում է թուրքերին, որ վերջիններս կողմերին դրանց հնարավոր ուրման պատասխանատվությունից զերծ պահելու համար քավության նոխազ են որոնում: Որոնումներում օգնում է մարդասպան թուրք հրոսակի համար անասնական բնազդ դարձած հայատյացությունը:

Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ Նյու Յորքի turkishny.com կայքէջի մարտի 27-ի հրապարակմանը: Ահա թե ինչ է գրած. «Իսրայելի հայկական լոբբին նախաձեռնություն է դրսեւորում, որ Նաթանյահուի կառավարությունը ճանաչի այսպես կոչված Հայոց ցեղասպանությունը: Նախաձեռնության հեղինակը Իսրայելում գործող «Արարատ» կազմակերպությունն է: Եթե հայերի ճնշմամբ ցեղասպանության որեւէ բանաձեւ ներկայացվի Քնեսեթ, ապա վերստին կտրվեն վարչապետ Նաթանյահուի ներողությամբ վերականգնվող թուրք-իսրայելական հարաբերությունները»:

Թուրքական կայքէջի հրապարակումը մեկնաբանության կարիք չի զգում: Մնում է պարզապես նշել, որ հայատյացության պատճառով մարդասպան թուրք հրոսակի անասնական բնազդը համադրվում է հիվանդ երեւակայության հետ:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

ԼՈՆԴՈՆ

# Սիրիայում կռվող արեւմուտքցիները սպառնալիք են Եվրոպայի եւ ԱՄՆ-ի համար



**Եվրոպան եւ ԱՄՆ-ը շուտով կարող են բախվել ներքին ահաբեկչության ուժեղացման վտանգին, նախազգուշացնում է Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությունը երկրի խորհրդարանին ներկայացրած վերջին զեկուցագրում:**

**Լոնդոնում իրադրության առաջիկա սրումը կապում են Սիրիայի հակամարտության հետ: Մոսկովյան «Կոմերսանտ» թերթը վկայակոչում է անվտանգության եւ հակաահաբեկչական պայքարի բրիտանական ծառայության պետ Չառլզ Ֆարրին, որի տվյալներով, ներկայումս սիրիացի արմատականների հետ կողք կողքի մարտնչում են 70-100 բրիտանացիներ:**

**Նախագահ Բաշար Ասադի վարչակարգի դեմ կռվող եվրոպացիների ընդհանուր թիվը գնահատվում է մի քանի հարյուր մարդ: Պատերազմից հետո Եվրամիության երկրներ վերադառնալով՝ նրանք կարող են կազմակերպել խոշոր դիվերսիաներ եւ ահաբեկչություններ:**

**Որոշ տեղեկությունների համաձայն, Սիրիայում ապստամբների կողքին կռվող գրոհայինների մեջ կան նաեւ ռուսաստանցի իսլամիստներ, մասնավորապես չեչեններ: Ռուսաստան վերադառնալուց հետո նրանք կդառնան անչափ վտանգավոր:**

**Մեծ Բրիտանիայի իշխանությունները գիտակցում են վտանգը եւ արդեն միջոցներ են ձեռնարկում: Երկրում գործում է Channel հատուկ ծրագիրը, որի միջոցով իշխանությունները բացահայտում եւ խնամքի տակ են առնում ծայրահեղական հայացքներ ունեցող կամ արմատականների հնարավոր ազդեցության վտանգին ենթակա մարդկանց: Ծրագրում արդեն ընդգրկված է ավելի քան 500 մարդ, այդ թվում՝ դպրոցահասակ երեխաներ:**

**Ենթադրվում է, որ սիրիական ընդդիմության շարքերում ներկայումս կռվում են մոտ 100 հոլանդահպատակներ: Չի բացառվում, որ նրանցից շատերը կփորձեն ահաբեկչություն կազմակերպել ապրիլի 30-ին, երբ Բեատրիքս թագուհին հանդիսավոր պայմաններում գահը կփոխանցի որդուն՝ Օրանի իշխան Վիլլեմ-Ալեքսանդրին:**

**Էլ ավելի բարդ վիճակում են հայտնվել Ֆրանսիայի իշխանությունները: Երկրի ՆԳՆ տվյալներով, սիրիացի ահաբեկիչների հետ կողք կողքի կռվում են 50-80 ֆրանսիացիներ: Նրանց մի մասը համալրել է իսլամիստների շարքերը Մալիում, որտեղ ֆրանսիական զորքը գլխավորում է միջազգային հակաահաբեկչական գործողությունը:**

# Բրազիլացի բժշկուհին կասկածվում է 300 մարդու սպանության մեջ



**Բրազիլիայում բժշկուհի Վիրգինիա Սուարեշ Սոուզան, որն արդեն իսկ մեղադրվել է 7 հիվանդների սպանության մեջ, կասկածվում է առնվազն 300 ուրիշների նկատմամբ նույն ոճիրը գործած լինելու մեջ՝ հիվանդանոցում տեղեր ազատելու նպատակով: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:**

**Իրավապահ մարմինների աշխատակիցներն ուսումնասիրում են Կուրիտիբա քաղաքի Ավետարանչական հիվանդանոցի ինտենսիվ թերապիայի բաժանմունքում մահացած անձանց վերաբերող 1800 գրառումներ: Սոուզան վերջին 7 տարիներին այդ հիվանդանոցի ղեկավարն էր:**

**Սոուզայի գործով գլխավոր քննիչ Մարիու Լոբատոն տեղական հեռուստաեթերում ասել է, որ արդեն հարուցվել է 20 քրեական գործ եւ կհարուցվի եւս մոտ 300 գործ:**

**Քննության տվյալներով, բժշկուհին եւ նրա ենթակաները բազմիցս կրկնել են միեւնույն գործողությունը: Նրանք հիվանդներին ներարկել են մկանները թուլացնող դեղամիջոցներ, նրանց առավել կախյալ դարձնելով թոքերի արհեստական օդափոխությունից, իսկ հետո նվազեցրել են թթվածնի մատակարարումը՝ շնչահեղձ անելով մարդկանց:**

**Փետրվարին Սոուզային մեղադրել էին ծանրացուցիչ հանգամանքներում 7 կանխամտածված սպանություն կատարելու մեջ: Սպանության մեղադրանքներ էին ներկայացվել նաեւ 3 բժիշկների, 3 բուժքույրերի եւ 1 ֆիզիոթերապեւտի. բոլորն էլ նրա ենթականերն են:**

**Հեռախոսազրույցների ձայնագրությունները վկայում են, որ ոճրագործ բժշկուհին ձգտել է հիվանդանոցում տեղեր ազատել ուրիշ հիվանդների համար: Բացի դրանից, իրավապահները կարծում են, որ նրան դուր էր գալիս իրեն զգալ «ամենազոր» եւ որոշել, թե ով երբ է մեռնելու:**

**Եթե 56-ամյա Սոուզայի մեղքն ապացուցվի, նա կարող է զոհերի թվով առաջ անցնել սերիական մարդասպան Հարոլդ Շիպմանից, որի մականունը «Դոկտոր Մահ» էր: Ենթադրվում է, որ Մեծ Բրիտանիայում 20-րդ դարում հայտնի դարձած այդ մոլագարը պատասխանատու է առնվազն 200 հիվանդի մահվան համար:**

# «Հայաստանը պատրաստված է ծնկի իջնելու»

## *Ասում է թուրք գործիչը՝ անտեսելով ե՛ւ «զգոն թուրքերի», ե՛ւ Ադրբեջանի ծնկած վիճակը*

Ժողովրդական ասացվածքին համապատասխան՝ «Հավը երազում կորեկ է տեսնում»: Իսկ թուրքերը այլ ժողովուրդների ուզում են իրենց առջեւ ծնկի իջած տեսնել: Օրինակ՝ Իսրայելի վարչապետ Նաթանյահուի ներողության առնչությամբ վարչապետ Էրդողանը հայտարարել էր, թե Իսրայելին ծնկի են բերել թուրք ազգի առջեւ, առանց հաշվի առնելու, որ այդ ներողությունը չի բավարարում թուրքական գեթ մեկ պահանջ:

«Գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության՝ Ազգայնական շարժում կուսակցության պատգամավոր եւ փոխնախագահ Մեւլութ Քարաքայան էլ, ինչպես երեկ նշել էր turkishny.com կայքէջը, հայերին ծնկի բերելու մտավարժանքներ է անում: Թուրք ազգի շատ փառապանծ այս զավակը ադրբեջանական Gun.az գործակալության հարցերին պատասխանելիս ասում է, որ Հայաստանն իսկույն պետք է հեռանա Ղարաբաղից, օկուպացված այս տարածքը պատկանում է թուրքերին, հետեւաբար անհրաժեշտ է հանձնել տիրոջը:

Քարաքայան կարծիք է հայտնում, որ Հայաստանն ի վիճակի չէ երկար ժամանակ օկուպացված պահել Ղարաբաղը, նա պատրաստված է ծնկի իջնելու հետզհետե հզորացող Ադրբեջանի առջեւ, եւ հայ ժողովուրդը պարտավոր է հասկանալ այս իրողությունը:

Այս արարածը հիրավի շատ հոգատար է հայ ժողովրդի հանդեպ, պարզապես նրան հիշողությունն է դավաճանում: 1994-ին Ադրբեջանը զինադադարի աղերսագին խնդրանքով, բացի Հայաստանից, դիմել էր նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը, այսինքն՝ ծնկի էր իջել հայկական երկու պետությունների առջեւ:

Ինչ վերաբերում է շատ փառապանծ թուրք ազգին, ապա նրա զգոն զավակներին էլ՝ շուրջ 3000 մարդ, 90-ականների սկզբին Ղարաբաղ էր գործուղել «գորշ գայլերի», հետեւաբար Քարաքայայի առաջնորդ Ալփարսլան Թյուրքեշը: «Զգոն թուրք» կոչեցյալ այս վարձու մարդասպանները տեղաբաշխվել էին Ղարաբաղի տարածքում, մասնավորապես Շուշիում եւ Խոջալուում: Սակայն մի մասը շանսատակ արվեց, մյուսը՝ զենքը շպրտելով ազերի եղբայրների հետ հայ ազատամարտիկների բացած միջանցքով ճողոպրեց ռազմի դաշտից, մի մասն էլ հանձնվեց հաղթողների ողորմածությանը, այսինքն՝ ծնկի իջավ հայ ազատամարտիկի առջեւ: Քարաքայան հավ չէ, որ կորեկ տեսնի երազում, սակայն թուրք է, ծնրադիր վիճակում ուզում է ուրիշներին ծնկի բերել:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

# Այցելություն Պետրոս Ադամյանի շիրիմին



Պոլսի «Ժամանակ» օրաթերթի գրական խմբագիր **Սեւան Դեյիրմենճյանի** փոխանցմամբ, թատրոնի համաշխարհային օրվա առթիւ մի խումբ պոլսահայ դերասաններ ու արվեստասերներ այցելել են մեծ դերասան Պետրոս Ադամյանի շիրմին, որ գտնվում է Շիշլի թաղամասի կաթողիկե հայերի գերեզմանատանը: Նրանք ծաղկեփունջ են զետեղել Ադամյանի շիրմին: Բաժանվել են Ադամյանի կենսագրության մասին թերթիկներ: Ընթերցվել է Ադամյանի մահվան կապակցությամբ Հովհաննես Թումանյանի գրի առած քերթվածը: Շիրմի մոտ լռությամբ ոգեկոչվեց մեծ դերասանի ու հանգուցյալ բոլոր դերասանների ու արուեստագետների հիշատակը:

# Բախվեցին «Արտավազդները»

Ինչքան մեծ է արտիստը, նույնքան մեծ բան ունի սովորելու, եւ դրանում է նրա մեծությունը: «Ինքս շատ բան եմ սովորել... Նույնիսկ փոքրերից եւ փոքրություն չեմ համարել այդ», մի առթիվ ասել է մեծ արտիստ Վահրամ Փափազյանը, որի ծննդյան 125 ամյակին էր նվիրված «Արտավազդ» մրցանակաբաշխությունը այս տարի:

Թատրոնի միջազգային օրվա առթիվ, ինչպես յուրաքանչյուր տարի, այս տարի եւս տեղի ունեցավ «Արտավազդ» մրցանակաբաշխությունը:

Ընդգծենք, որ այս տարի միայն երկրորդ պլանի լավագույն դերասանուհի անվանակարգում որեւէ հաղթող չճանաչվեց, սակայն կային մի շարք անվանակարգեր էլ, որոնցում հաղթանակը կիսեցին երկուսը: Հետեւելով մրցանակաբաշխության ընթացքին, նկատեցինք, որ այս տարի պայքարը երիտասարդների շրջանում ավելի թեժ էր, ինչը «Ազգի» հետ զրույցում փաստեց նաեւ թատերագետ, մրցանակաբաշխության փորձագետների խմբի անդամ Նվարդ Ասատրյանը. «Շատ ուրախ եմ, որ այժմ սրվում է մրցակցությունը երիտասարդների միջեւ: Կարող ենք ասել, որ մենք ապագա ունենք», ասաց նա: Ճշտեցինք, թե ինչու որեւէ մեկը չարժանացավ երկրորդ պլանի լավագույն դերասանուհի մրցանակին, Ն. Ասատրյանն ասաց. «Այդ անվանակարգում կային արժանավորներ եւ շատ ափսոսում եմ, որ իմ գործընկերները հարմար չգտան որեւէ մեկին առանձնացնելու: Սակայն ես նույնիսկ ամեն անվանակարգում երկուսին եմ ձայնս տվել»:

Ընդգծենք, ըստ նոր կանոնակարգի, եթե մասնակիցը հավաքի առնվազն 3 ձայն, ապա չորրորդը ձայնը կմիացներ Հակոբ Ղազանչյանը:

Անդրադառնալով մրցանակաբաշխության անվանակարգերին, նշենք, որ տարվա լավագույն երիտասարդ դերասանուհի է ճանաչվել Անի Գրիգորյանը, իսկ դերասան՝ Արմեն Մարգարյանն ու Իշխան Ղարիբյանը, լավագույն երիտասարդ բեմադրիչ՝ Սամսոն Մովսեսյանը (որն, ի դեպ, այժմ ծառայում է հայոց բանակում), լավագույն երիտասարդական ներկայացում՝ «Սկոտչ եւ Վիսկին», բեմ.՝ Արշալույս Հարությունյան, լավագույն սցենոգրաֆիա՝ Վահագն Թեւանյանի «Ռոմանտիկ կոմեդիան» եւ «Մորգանի խնամին», երաժշտության լավագույն հեղինակ՝ Արամ Սաթյանը, լավագույն պիեսը՝ Սամվել Խալաթյանը «Պադամ, պադամ, պադամ...», երկրորդ պլանի լավագույն տղամարդ դերակատար՝ Սերգեյ Թովմասյանը իսկ երկրորդ պլանի լավագույն կին դերակատար, ինչպես նշեցինք, ոչ ոք չարժանացավ, լավագույն կին դերակատար՝ Լուիզա Ղամբարյանը, լավագույն տղամարդ դերակատար՝ Երվանդ Ենգիբարյանը եւ Դավիթ Հակոբյանը, լավագույն ռեժիսուրա՝ Ալեքսանդր Գրիգորյանի «Բադի որսը» ու «Ֆիլումենա Մարտուրանո» եւ Հակոբ Ղազանչյանի «Նապոլեոն Կորկոտյան» ու «Վիրուս» ներկայացումները, լավագույն ներկայացում՝ «Մորգանի խնամին», բեմ.՝ Ե. Ղազանչյան եւ «Աբգար դպիր», բեմ.՝ Վ. Շահվերդյան: Ի դեպ, Ե. Ղազանչյանը եւ Վ. Շահվերդյանն ասացին, որ իրենք հրաժարվում են գալիք տարիներին մասնակցել «Արտավազդ» մրցանակաբաշխությանը՝ իրենց տեղը զիջելով երիտասարդներին:

Վ. Փափազյանի անվան մրցանակ հանձնեցին Մուրադ Ջանիբեկյանին, իսկ թատերարվեստին արժանապատիվ ծառայության համար «Արտավազդ» մրցանակի արժանացան՝ Վիլեն Գալստյանը, Դերենիկ Մարտիրոսյանը, Հայկազ Երանոսյանը եւ Սերգեյ Առաքելյանը:

ՀԹԳՄ նախագահության եւ քարտուղարության կողմից «Արտավազդի» արժանացան Գագիկ Կարապետյանը՝ Հայաստանի թատերաբեմերում 50-ից ավելի պարային բեմադրությունների համար, Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնը՝ մայր հայրենիքի միջեւ ստեղծագործական կապերի ամրապնդման, հայապահպանության գործում ունեցած վաստակի ու ձեռքբերումների համար, Գյումրու Վ.Աճեմյանի դրամատիկական թատրոնի հետ համատեղ Գ.Սունդուկյանի «Այ քեզ Խաթաբալա» ներկայացման համար: Մրցանակի արժանացան նաեւ «Մոսկվայի» տան կրթական եւ մշակութային կենտրոնի տնօրեն Արմինե Թութունջյանը՝ «Ամիսը գյուղում» ներկայացման համար, Աբովյանի դրամատիկ թատրոնը եւ «Էպսիդոն» թատերախումբը, որը գործում է ընդամենը 1 տարի:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Մեծարանքի հանդիսություն

Հայաստանյայց եկեղեցու Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արք. Տերտերյանի հովանավորությամբ, կազմակերպությամբ Թեքեյան մշակութային միության Լոս Անջելեսի մասնաճյուղի, Ս. Ղեւոնդյանց Մայր տաճարում ապրիլի 7-ին տեղի կունենա մեծարանքի հանդիսություն ի պատիվ Վաչե Սեմերճյանի, Ամենայն հայոց հայրապետ Գարեգին Բ-ի կողմից նրան շնորհված Ս. Սահակ-Ս. Մեսրոպ շքանշանի տվչության առթիվ:

Շքանշանի տվչությունը՝ Ս. պատարագի ընթացքում:

Շնորհավորանքների նվերները հատկացվելու են Թեքեյան մշակութային միության ծրագրերին:




*Այդ օրը Սբ Հովհաննես եկեղեցում հրաժեշտի տխրության ոգին էր իջել: Մարդկանց հոսքը չէր դադարում: Ծանոթ էին բոլորը, քանզի նույն զգացողության տրամադրությունն էր համակել ամենքին: Հավաքվածները լավագույններն էին իրենց ասպարեզների՝ մտավորական, արվեստագետ, գիտնական, բժիշկ: Այստեղ էին նաեւ պետական-քաղաքական գործիչներ, երկրի ղեկավար դեմքեր՝ անցյալի ու ներկայի: Խորհրդանշական էր եկեղեցում հանրապետության առաջին նախագահի ու ներկայիս վարչապետի եւ մյուս պաշտոնյաների միեւնույն պահի ներկայությունը: Եվ այդպես՝ շատերը, իրարից տարբեր, երբեմն հակադիր, նաեւ չհանդուրժող, բայց միասին էին: Վերջին հրաժեշտին Վարպետը, ասես, համախմբումի, միասնականության, ըմբռնողականության պատգամն էր թողնում:*

*Եկեղեցու մուտքին դեմ դիմաց կանգնած խմբից առանձնացավ **Պողոս Հայթայանը**, մոտեցավ, մեկ-երկու լավ-խրախուսական խոսքից հետո, ինչպես սովորաբար իրեն է հատուկ, անցավ գեղանկարչությանը, այսինքն՝ Հակոբ Հակոբյանի նկարչությանը. իրեր, առարկաներ պատկերող նրա նկարների մետաֆիզիկական բնույթի մասին էր խոսում, այնպես, ինչպես ինքը կարող է միայն խոսել՝ տաք, հագեցած, մի տեսակ կարոտով՝ գույնի կարոտով, հիքնայրումով:*

*Մարդկանց հոսքը չի դադարում, անցնում են, դուրս գալիս: Օդում պտտվում է հրաժեշտի-բաժանման անխուսափելիության ու դրա հետ՝ միեւնույն է, մեր չհաշտվելու անզորությունը: Խոսքերը՝ քարի, փշեբույսի, հեռագրային, հողագույնի ու դրանցից անդինի մասին կիսատ են մնում: Միտքդ հրաժեշտի-բաժանման մեջ է:*

*13 օր հետո երբ Գաֆէսճեան արվեստի կենտրոնում Վարպետի ցուցահանդեսի բացմանը հանդիպեցինք կրկին, արվեստաբանի հայացքում կիսատ մնացած խոսքի շարունակությունը կարդացի: Գիտեի, որ ասելիք ունի...*

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# Կիսատ մնացած խոսք




«...Ոչ ոք չի հավատա, որ ես Հակոբ Հակոբյանին ճանաչել եմ 1962 թ., երբ մի քանի ամիս էր, որ ընդունվել էի արվեստի ինստիտուտ: Ռուբեն Վարոսիչը ասաց՝ Եգիպտոսից նկարիչ է եկել ու մեզ տարավ Լենինական: Իմ՝ Հակոբ Հակոբյանի իմացությունը արդեն մոտ 50-60 տարվա պատմություն ունի: Եվ բախտի բերմամբ, թե պատահմամբ ինքը ցույց տվեց մի մերկ ֆիգուրա՝ անապատում. կքած մարդը կանաչ բույսը գուրգուրում է, որ ապրի: Ես այն ժամանակ տեսա, որ այս մարդը բնություն, առարկայական աշխարհ է նկարում, բայց իր ասելիքը արտաքին պատյանից հետո է գալիս: Սա մի բնազանցական տեսություն է, եւ ինքը, նկարիչ լինելով, մտնում է փիլիսոփայական դաշտ: Ինքը դա անում է խստագույնս զուսպ, քիչ գույներով եւ առհասարակ արվեստի միջոցները չի չարաշահում, եւ որքան հնարավոր է իր ուզածի համեմատ, իր մտքի, խնդրի համեմատ ծախսում է իր ներկը, վրձինը, գիծը, ձեւը եւ այդ ձեւը ամբողջության մեջ իր հոգեպատկերն է եւ՝ բնազանցական: Ես ոչ թե պաշտում եմ բնազանցությունը, այլ Հակոբի արվեստի մեջ տեսնում եմ այդ բնազանցությունը: Գիտենք, տեղյակ ենք արվեստի պատմությանը, տարբեր ուղղություններին, ոճերին՝ իմպրեսիոնիզմ, նատուրալիզմ, կուբիզմ, ռեալիզմ եւ այլ: Ամենատիպական բնորոշումը Հակոբ Հակոբյանի արվեստի՝ մոգական ռեալիզմն է:

Երբ նկարչական աշխարհում ասում էին՝ Հակոբ Հակոբյանը գույն չի զգում, նա այդ բոլորին պատասխանեց ընդամենը մի ռեպլիկով, ասաց՝ այո, ես կարմիր գույն չեմ զգում: Այսինքն՝ հայ գեղանկարչության մեջ հայկական կոլորիզմի մասին որ հեքիաթներ էին պատմում, ինքը ուղիղ հակառակ գնաց եւ ասաց՝ ես զուսպ գույների կողմնակից եմ: Բայց խնդիրը ասելիքն է, այդ զուսպ գույների միջոցով նա ասաց այնքան շատ բան, որ ինքը գնաց, բայց իր գործերը ապրելու են շատ երկար:

Այսօր քանդակագործներ կային այս դահլիճում: Ես նրանց դեմքերին եմ նայում՝ շփոթված են. մի՞թե կարելի է նման բան անել: Մի՞թե աքցաններով, մկրատներով, երկաթե գործիքներով կարելի է անել նման բան:

Ժամանակին իր գեղանկարչության, իր պեյզաժի մեջ տարօրինակ մարմիններ հայտնվեցին, որոնք նման էին գործիքների: Եվ աստիճանաբար դա բերեց-հասցրեց այսօրվան՝ ունենք Հակոբյան գեղանկարիչ եւ Հակոբյան քանդակագործ: Եվ այս քանդակները ոչնչով չեն զիջում իր գեղանկարչությանը եւ ինչ-որ տեղ դիտողին անընդհատ հարցականներ են մատուցում: Ինքը հակում չունի պատասխանների: Դա է արվեստի մեծ գաղտնիքը: Արվեստը ինքը հարցական է՝ սկսած Լեոնարդոյից, մյուսներից: Իր անհասկանալիությամբ առեղծված է: Եզակի դեմք է սա: Բայց իր եզակիությունը ճամփա չի փակում, ինքը ճամփա է բացում իրենից հետո եկողների համար: Ինքը ուզում է ասել, որ բոլոր այդ ակադեմիական դիսցիպլինները, ակադեմիական սովորածները իր մեջ ունեցել է, բայց գերի չի դարձել այդ իմացություններին, այլ հավատացել է իր հոգու գույնին, սրտի ձայնին: Եվ ինքը վերին աստիճանի ազատամիտ մարդ է: Ահա այստեղ նայեք, այնքան բան կա, այնքան հումոր կա, այնքան բազմիմաստություն կա, այնքան տարօրինակ սյուժեներ կան, եւ այդ բոլորը արված է բացարձակ արվեստի լեզվով: Այդ արվեստի լեզվի շնորհիվ է, որ հայ ժողովուրդը ունի Հակոբ Հակոբյանի նման արվեստագետ, եւ ուր որ ուզում եք տարեք՝ ուզում եք տարեք Տոկիո, ուզում եք տարեք Նյու Յորք, Փարիզ, միեւնույն է՝ ինքը ձգողականություն ունի, ինքը չի վանում, որովհետեւ այդ երկաթի, անշունչ երկաթի մեջ հոգի կա ու հոգեղենություն կա»:

# «Candoco» պարի թատրոնի համերգը շուտով

Բրիտանական խորհրդի աջակցությամբ մարտի 30-ին եւ 31-ին Երեւանի Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Candoco» պարի թատրոնի համերգը՝ «Երեք գործողությամբ ներկայացում» բեմադրությամբ եւ նույն թատրոնի պարողների մասնակցությամբ «Սահմաններից ներս» ֆիլմի ցուցադրությամբ: Ներառական պարի այս թատրոնը, որի կազմում ընդգրկված են նաեւ հաշմանդամություն ունեցող պարողներ, իրենց ներկայացումների ուժով հանդիսատեսի մոտ կոտրում են մարդկային հնարավորությունների եւ արվեստի մասին կարծրատիպերը: Իր տեսակի մեջ առաջին թատրոնն է Միացյալ Թագավորությունում եւ առաջատարներից մեկը ողջ աշխարհում:

# Մարզական

## Հայաստանցի ըմբիշները հաստատեցին իրենց բարձր կարգը

Վերջերս Թբիլիսիում անցկացված ըմբշամարտի Եվրոպայի առաջնությունում հաջող հանդես եկան Հայաստանի ըմբիշները: Մեր ազատոճայինները նվաճեցին մեկական ոսկե եւ արծաթե մեդալ, իսկ հունահռոմեական ոճի ըմբիշներն արժանացան մեկ ոսկե եւ 2 բրոնզե մեդալի:




Առաջնության արդյունքների ամփոփմանն էր նվիրված երեկ «Ելակետ» ակումբում տեղի ունեցած ասուլիսը, որին ներկա էին հունահռոմեական ոճի Հայաստանի հավաքականի մարզիչ Սամվել Գեւորգյանը, Եվրոպայի կրկնակի չեմպիոն Արթուր Ալեքսանյանը եւ նրա անձնական մարզիչ, միջազգային մրցավար Գեւորգ Ալեքսանյանը, որն ըմբիշի հայրն է:

**Արթուր Ալեքսանյանը** նշեց, որ անձամբ իր համար մեծ նվաճում էր Եվրոպայի չեմպիոնի տիտղոսին կրկին արժանանալը, ուրախությունն էլ կրկնակի էր: Արթուրը հպարտ է, որ հաջողվեց բարձր պահել Հայաստանի մարզական պատիվը, ուրախացնել հայ երկրպագուներին: Ըստ նրա, մրցաշարում թույլ մրցակիցներ չկային եւ թեեւ ինքը մեծ առավելությամբ էր հիմնականում հաղթել, սակայն բոլոր գոտեմարտերն էլ դժվար էին: Հատկապես դժվար էր վրացի ըմբիշի հետ գոտեմարտը, քանի որ թե՛ մարզասերներն էին բուռն կերպով աջակցում մրցակցին, թե՛ մրցավարներն էին փորձում ինչ-որ կերպ օգնելու նրան: Սակայն Արթուրը հիանալի ելույթ ունեցավ եւ մրցակցին ու մրցավարներին ոչ մի հնարավորություն չընձեռեց: Եզրափակիչում էլ բուլղարացի ըմբիշին հաղթելն Արթուրից մեծ ջանքեր չպահանջեցին:

Այս տարի Արթուրին եւս մեկ փորձություն է սպասվում: Նա պետք է ձգտի ոսկե մեդալ նվաճել նաեւ սեպտեմբերին Հունգարիայում կայանալիք աշխարհի առաջնությունում: Մայիսին Ծաղկաձորում նախատեսված է ուսումնամարզական հավաք, որից հետո Արթուրն իր թիմակիցների հետ կմասնակցի միջազգային մրցաշարի: Իսկ Արթուրի նվիրական երազանքն օլիմպիական չեմպիոն հռչակվելն է:

Հունահռոմեական ոճի ըմբշամարտի Հայաստանի հավաքականի մարզիչ **Սամվել Գեւորգյանը** գոհ է մեր ըմբիշների ելույթից: Նա նշեց, որ այս անգամ հավաքականում երիտասարդ ըմբիշներ էին ընդգրկված, որոնցից շատերն առաջին անգամ էին մասնակցում Եվրոպայի առաջնությանը: Ավելի շատ մեդալներ կարելի էր ակնկալել, եթե մրցումներին մասնակցեին նաեւ Ռոման Ամոյանը, Արսեն Ջուլֆալակյանն ու Յուրի Պատրիկեեւը: Ռոմանը վատառողջ էր, իսկ Արսենին մարզիչները հանգստանալու հնարավորություն էին տվել, որպեսզի ավելի լավ նախապատրաստվի աշխարհի առաջնությանը:

Հավաքականի մարզիչը գովեստի խոսքեր ուղղեց Արթուր Ալեքսանյանին, որը թեեւ վիճակահանությամբ շատ ուժեղ խմբում էր հայտնվել, սակայն վստահ անցկացրեց գոտեմարտերն ու կրկին հաստատեց, որ մինչեւ 96 կգ քաշային կարգում Եվրոպայում ուժեղագույնն է: Հաճելիորեն զարմացրեց մեր գերծանրքաշային Վաչիկ Եղիազարյանը, որը փոխարինել էր տիտղոսակիր Յուրի Պատրիկեեւին: Ըստ մարզչի, ռուս ըմբիշի նկատմամբ Վաչիկի տարած հաղթանակը շատերի համար անակնկալ էր: Ինչ խոսք, Պատրիկեեւի հետ մարզվելը հայ ըմբիշին շատ է օգնել:

Սամվել Գեւորգյանը նշեց, որ Արթուր Շահինյանն էլ կարող էր եզրափակիչում հայտնվել, սակայն վրացի ըմբիշի հետ կիսաեզրափակիչ գոտեմարտում մի փոքր սխալ թույլ տվեց ու ստիպված էր պայքարել բրոնզե մեդալի համար: Սասուն Ղամբարյանն էլ 66 կգ քաշային կարգում կարող էր մրցանակակիր դառնալ, սակայն նա էլ որոշ սխալներ թույլ տվեց ու զրկվեց մեդալից:

Օգտվելով առիթից, Սամվել Գեւորգյանը շնորհավորեց մեր ազատոճային ըմբիշներին հաջող ելույթների համար: Նա նշեց, որ 9 տարի շարունակ չէր հաջողվում Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը նվաճել: Եվ ահա Դավիթ Սաֆարյանը (66 կգ) լրացրեց այդ բացը: Դավիթն էլ Մուրթազալիեւի հետ Ռուսաստանից է ընդգրկվել Հայաստանի հավաքականում եւ հայ մարզիչների շնորհիվ հասավ մեծ նվաճման:

Խոսելով որդու ելույթների մասին, **Գեւորգ Ալեքսանյանը** նշեց, որ Արթուրն իրոք բարձր մակարդակով հանդես եկավ: Ըստ նրա, Արթուրը երբեք չի թերագնահատում մրցակիցներին, նույնիսկ եթե զգում է, որ գերազանցում է նրանց: Առաջին գոտեմարտում շվեդ ըմբիշի հետ պայքարում Արթուրը խնայեց իր ուժերը: Վրացի ըմբիշի հետ գոտեմարտում թեեւ մրցավարները փորձեցին ինչ-որ կերպ խանգարել հայ ըմբիշին, սակայն Արթուրը ուժեղ գտնվեց մրցակցից:

Գեւորգ Ալեքսանյանը խոսեց նաեւ մրցավարությունից, նշելով, որ Թբիլիսիում բացահայտ կողմնակալության դեպքեր չգրանցվեցին: Իսկ տեղ գտած սխալներն էլ միտումնավոր չէին: Ըստ Ալեքսանյանի, կանոններում կատարված որոշ փոփոխությունների շնորհիվ ըմբիշների գոտեմարտերն այժմ ավելի դիտարժան են դարձել: Ըմբիշները ստիպված են ավելի ակտիվ գոտեմարտել, հնարքներ կիրառել, այլապես պասիվ մարտ վարելու դեպքում կզգուշացվեն: Նոր կանոններն ըմբիշներից ֆիզիկական ավելի լավ պատրաստություն է պահանջում: Այս առումով էլ հայաստանցի ըմբիշները Թբիլիսիում իրենց լավ դրսեւորեցին:

## Աբրահամը հուսով է, որ ռեւանշ-մենամարտը կկայանա

Ինչպես տեղեկացանք Արթուր Աբրահամի մամուլի ծառայությունից, Ռոբերտ Շտիգլիցի հետ մենամարտում աչքի վնասվածք ստացած հայ բռնցքամարտիկի առողջական վիճակը նորմալ է: Արթուրը տեսողության հետ կապված որեւէ խնդիր չունի: Մենամարտից հետո նա բուժզննում էր անցել հիվանդանոցում եւ որեւէ լուրջ վնասվածք չէր հայտնաբերվել: Պարզապես ակնախոռոչն ուռել էր եւ փակել էր ակնաբիբը: Ներկայումս Արթուրը նույնիսկ արեւային ակնոց չի կրում:



Ինչպես հայտնի է, մենամարտից հետո Արթուրը ռեւանշ-մենամարտ էր պահանջել Շտիգլիցից, որը մրցակիցն ընդունել էր: Այս առնչությամբ Արթուրը հետեւյալն է ասել. «Մենամարտին լավ էի պատրաստվել: Բայց բռնցքամարտում անկանխատեսելի երեւույթներ հաճախ են պատահում: Շտիգլիցի հարվածից հետո նրա ձեռնոցի բութ մասը մտավ աչքս, որի պատճառով էլ ակնախոռոչս ուռեց եւ բժիշկը չթույլատրեց շարունակել մենամարտը: Իմ եւ Շտիգլիցի 3-րդ մենամարտը որոշիչ կլինի: Հուսով եմ, որ Շտիգլիցն ինձ ռեւանշի հասնելու հնարավորություն կտա, չէ՞ որ մեր անձնական հանդիպումների հաշիվն առայժմ հավասար է՝ 1-1: Դեռ հայտնի չէ, թե երբ կկայանա ռեւանշ-մենամարտը, որի կազմակերպման հարցում պետք է 2 կողմերը բանակցեն ու համաձայնության գան»:

### ՇԱԽՄԱՏ

## Արոնյանը պարտվեց Սվիդլերին ու նահանջեց 3-րդ հորիզոնական

**Լոնդոնում ընթացող շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսի հավակնորդների մրցաշարը մոտենում է ավարտին: Վերջնագծի մատույցներում պայքարի լարվածությունը հասել է գագաթնակետին: Հաղթողի գլխավոր հավակնորդների համար յուրաքանչյուր վրիպում կարող է ճակատագրական լինել:**

**11-րդ տուրում Լեւոն Արոնյանը սեւերով խաղում էր Պյոտր Սվիդլերի հետ: Նրանց մրցավեճը վերջինն ավարտվեց: Ցավոք Արոնյանն անհաջողության մատնվեց՝ կրելով մրցաշարում 2-րդ պարտությունը, ինչը զգալիորեն նվազեցրեց միակ ուղեգրի համար պայքարում Լեւոնի հաջողության հասնելու հնարավորությունները: Արոնյանը 6,5 միավորով նահանջեց 3-րդ հորիզոնական: Սվիդլերը վաստակեց 5,5 միավոր:**

**Մրցաշարի առաջատար Մագնուս Կառլսենը կարճատեւ պայքարից հետո արդեն 23-րդ քայլին սեւերով հաշտություն կնքեց Ալեքսանդր Գրիշչուկի հետ: Նա 7,5 միավորով միանձնյա գլխավորում է աղյուսակը: Ավելի կարճ տեւեց Վասիլի Իվանչուկի եւ Բորիս Գելֆանդի մրցավեճը, որում մրցակիցները խաղաղ դաշն կնքեցին արդեն 17-րդ քայլին:**

**Մրցաշարի 2-րդ շրջանում վերելքով է հանդես գալիս Վլադիմիր Կրամնիկը, որը հաղթելով Ռաջաբովին, վաստակեց 7 միավոր՝ շրջանցելով Արոնյանին: 5-ական միավոր ունեն Գելֆանդն ու Գրիշչուկը:**

**Այսօր կայանալիք 12-րդ տուրում ուշադրության կենտրոնում կլինի Արոնյանի եւ Կրամնիկի սկզբունքային մրցախաղը, որում հայ գրոսմայստերը կխաղա սպիտակներով: Կառլսենի մրցակիցը կլինի Իվանչուկը:**

## Վարդան Մինասյանի հրաժարականը չի ընդունվել

**Ինչպես ՀՖՖ պաշտոնական կայքին տեղեկացրել է ՀՖՖ հավաքականների բաժինը, Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը Հայաստան-Չեխիա հանդիպումից հետո հրաժարականի դիմում է ներկայացրել, որը, սակայն, ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը չի ընդունել:**

**Այսօր Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանի հրաժարականի դիմումը կքննարկի նաեւ ՀՖՖ գործադիր կոմիտեն:**

## Քաղաքապետը պարգեւատրեց պատանի շախմատիստներին



**Ինչպես տեղեկացանք Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, քաղաքապետ Տարոն Մարգարյանը երեկ շնորհավորել ու պարգեւներ է հանձնել Հայաստանի շախմատի դպրոցականների 7-րդ օլիմպիադայի երեւանյան փուլի մրցանակակիրներին: Քաղաքապետը ոսկե մեդալներն ու գավաթը հանձնել է մրցաշարի հաղթող Բենիամին Ժամկոչյանի անվան թիվ 119 ավագ դպրոցի թիմին:**

**Մանուել Քաջունու անվան թիվ 54 եւ 2-րդ ավագ դպրոցների թիմերին, որոնք զբաղեցրել են մրցանակային 2-րդ եւ 3-րդ տեղերը, պարգեւները հանձնել են շախմատի Հայաստանի ֆեդերացիայի փոխնախագահ Սմբատ Լպուտյանն ու ՀԲԸՄ Երեւանի գրասենյակի տնօրեն Արփի Վարդանյանը: Թիմերի մարզիչներն արժանացել են պատվոգրերի: Դրանցով պարգեւատրվել են նաեւ մասնակից մյուս թիմերը:**

**Երեւանյան փուլի եզրափակիչ երկօրյա մրցումներն ավանդույթի համաձայն անցկացվեցին քաղաքապետարանի ճեմասրահում: Մասնակից 12 թիմերից յուրաքանչյուրի կազմում հանդես եկան 1 աղջիկ եւ 3 տղա: Առաջին 3 տեղերը զբաղեցրած թիմերն իրավունք ստացան մասնակցելու օլիմպիադայի հանրապետական փուլին:**

## «Լիվերպուլին» հետաքրքրել է Հենրիխ Մխիթարյանը

Լրատվամիջոցները շարունակում են տեղեկություններ հաղորդել Հենրիխ Մխիթարյանի հնարավոր տեղափոխության մասին: Ըստ Sportbox.ru-ի, այժմ էլ հայ ֆուտբոլիստը հետաքրքրել է անգլիական «Լիվերպուլին»: Կայքի տեղեկացմամբ, Հենրիխ Մխիթարյանն անգլիական ակումբի տրանսֆերային գլխավոր նպատակն է: Ենթադրվում է, որ Անգլիայի 18-ակի չեմպիոնը «Շախտյորի» հետ բանակցությունները կսկսի ապրիլին կամ մայիսին: Մխիթարյանի տրանսֆերային արժեքը գնահատվում է 25-30 մլն դոլար:

Վերջերս շատ են խոսում Անգլիայի պրեմիեր լիգա Մխիթարյանի հնարավոր տեղափոխության մասին: Նրանով արդեն սկսել են հետաքրքրվել «Չելսին», «Մանչեսթր Սիթին» եւ «Տոտենհեմը»: Ավելի վաղ հաղորդվում էր Հենրիխ Մխիթարյանի նկատմամբ «Բարսելոնի» եւ «Բավարիայի» հետաքրքրությունների մասին: Իսկ թե իրականում ինչպես կդասավորվի Մխիթարյանի ֆուտբոլային հետագա կարիերան, առայժմ դժվար է գուշակել:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ

# Օրվա հետքերով

## Մանկավարժականում բացվեց ժամանակակից գրադարան եւ նշվեց Ֆրանկոֆոնիայի օրը

Երեւանի Մանկավարժական պետական համալսարանում բացվեց ժամանակակից հերթական ընթերցասրահը, որի հանդիսավոր բացմանը ներկա էին բուհի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը, Հայաստանում «Ռոսսոտրուղնիչեստվո» դաշնային գործակալության ղեկավարի տեղակալներ, ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան առաջին քարտուղարներ Մարկ Կալինինը, Իգոր Կուսովը, կրթական ծրագրերի ղեկավարի տեղակալ Նատալյա Երյոմենկոն, Հայաստանում ռուսաց լեզվի կրթալուսավորչական ծրագրերի ռուսական ուսումնամեթոդական կենտրոնի համակարգող Սոնա Սարաջյանը, ինչպես նաեւ Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ։





Ներկաներին ողջունեց համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ռուբեն Միրզախանյանը**, ով ուսանողների եւ դասախոսների անունից շնորհակալություն հայտնեց հյուրերին՝ Մանկավարժական համալսարանին շուրջ 770 միավոր գիրք նվիրելու համար. «Համալսարանի հզորությունը որոշվում է նրա գրադարանով։ Ընթերցասրահին նվիրած ռուս գրականության հատորյակները բուհի համար անգնահատելի նշանակություն ունեն. գիրքը մնայուն եւ հզորագույն արժեք է»։

Ընթերցասրահի բացման առթիվ ներկաներին շնորհավորեց նաեւ «Ռոսսոտրուղնիչեստվո» դաշնային գործակալության ղեկավարի տեղակալ, ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան առաջին քարտուղար **Մարկ Կալինինը**. «Համալսարանի համար իսկական տոն է նման ընթերցասրահի բացումը. այն կարծես մեդիակենտրոն լինի՝ հագեցած ժամանակակից բոլոր հնարավորություններով»։ Ընթերցասրահում կան մասնաշենքի ֆակուլտետների մասնագիտական շուրջ 7500 միավոր գիրք, 11 համակարգիչ, գծային եւ օդային գերարագ համացանց եւ տեխնիկական այլ հնարավորություններ։

Առաջիկայում նախատեսվում է Մանկավարժական համալսարանում բացել եւս մի քանի ընթերցասրահ։

Նույն օրը «Սեր՝ պոեզիայի, երաժշտության եւ անձրեւի միջոցով» խորագրով միջոցառմամբ Մանկավարժական համալսարանում մեկնարկեցին Ֆրանկոֆոնիայի օրերը։

Միջոցառմանը ներկա էին ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենոն, ՀՀ արտաքին գործերի նախարարի՝ Ֆրանկոֆոնիայի հարցերով խորհրդական, դեսպան Քրիստիան Տեր-Ստեփանյանը, համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը, պրոֆեսորադասախոսական կազմն ու ուսանողներ։

**Անրի Ռենոն** իր ողջույնի խոսքում ընդգծեց, որ Մանկավարժական այցելելն իր համար միշտ սպասված է. «Բուհն այն եզակի հաստատությունն է, ուր Ֆրանկոֆոնիայի օրերի նշումը չի սահմանափակվում սեմինարներով եւ գիտաժողովներով. մշակութային ամենատարբեր միջոցառումները, երիտասարդների սիրո խոստովանությունն ամենասիրառատ լեզվով տոնը դարձնում են անմոռաց»։

Համալսարանի օտար լեզուների եւ այլ ֆակուլտետների մի խումբ ուսանողներ միջոցառման ողջ ընթացքում ֆրանսիական երաժշտության, պարի եւ պոեզիայի միջոցով ներկաներին հաղորդեցին Ֆրանսիայի շունչը, նրանց ծանոթացրին ֆրանսիական մշակույթին եւ դրա յուրահատկություններին։

Միջոցառման ավարտին ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը մեծ պատիվ համարեց դեսպանի ներկայությունը բուհում եւ խոստովանեց՝ նույնիսկ անձրեւի ժամանակ, երբ սիրո լեզվով են խոսում, սկսում է շողալ արեւը։

Մանկավարժականում Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում անցկացվող միջոցառումները կշարունակվեն։

## ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների համար ավագ ուրբաթը ոչ աշխատանքային օր է

ՎիվաՍել-ՄՏՍ-ն տեղեկացնում է, որ ընկերության աշխատակիցների համար արդեն երկրորդ անգամ ավագ ուրբաթը ոչ աշխատանքային օր է սահմանվել։ Այս տարի ավագ ուրբաթը նշվում է մարտի 29-ին։

Ծաղկազարդը, որով սկսվում է Սբ Հարության տոնին նախորդող ավագ շաբաթը, այս տարի նշվել է մարտի 24-ին։

Ավագ հինգշաբթին, որն այս տարի նշվում է մարտի 28-ին, նվիրված է վերջին ընթրիքին։ Այդ օրը երեկոյան կատարվում է խավարման կարգ, որը վերաբերում է ավագ ուրբաթին՝ խորհրդանշելով Տիրոջ խաչելությունը։

Ավագ ուրբաթ օրը կատարվում է խաչելության կարգ, իսկ երեկոյան ժամերգությունից հետո՝ թաղման կարգ. ծաղիկներից եւ ծառի ճյուղերից պատրաստված Հիսուս Քրիստոսի խորհրդանշական գերեզմանը, պտտում են եկեղեցու շուրջը։

Կիրակի՝ մարտի 31-ին, մենք կնշենք Հիսուս Քրիստոսի հարության տոնը, իսկ եկեղեցիներում կմատուցվի սբ պատարագ։ Հիսուս Քրիստոսի հարությունը քրիստոնեական հավատքի հիմքն է եւ խորհրդանշում է կյանքի եւ լույսի հաղթանակը՝ մահվան եւ խավարի հանդեպ։ Տոնը նաեւ կոչում են Զատիկ, որը նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից եւ վերադարձ առ Աստված։ Զատիկը եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկն է։

Հաջորդ կիրակի՝ ապրիլի 7-ին, Հայ առաքելական եկեղեցին կնշի իր ամենակարեւոր տոներից մեկը՝ Սբ Աստվածածնի ավետումը։ Ավետման տոնը հռչակվել է որպես մայրերի եւ մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության օր։ Այդ օրը բոլոր եկեղեցիներում կատարվում է օրհնության կարգ։

Ավագ շաբաթը, որը կոչվում է նաեւ ճրագալույցի Զատիկ, խորհրդանշում է Հիսուսի կողմից դժոխքի ավերումը եւ արդար հոգիների ազատումը։ Ավագ շաբաթի պատարագով մենք սկսում ենք Զատկի տոնակատարությունը՝ միմյանց ողջունելով «Քրիստոս հարյավ ի մեռելոց» ավետիսով եւ պատասխանելով՝ «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»։

Հայի ինքնության եւ քրիստոնեության օրրան Հայաստանի հանդեպ մեր նվիրումը պարտավորեցնում է պահպանել եւ հանրության շրջանում տարածել մեր կրոնական տոներն ու հիշատակության օրերը։ Սեփական պատմության ճանաչումը ապագան տանող լավագույն ճանապարհն է։

ՇՈՒԿԱ

## Փետրվարին անշարժ գույքի գործարքների քանակն աճել է

*1-ին էջից*

Մարզերում, բացառությամբ Երեւանի, փետրվարին վաճառվել են 401 բնակարաններ, որոնց քանակը հունվարի համեմատ աճել է 32,8 տոկոսով, իսկ 2012-ի փետրվարի համեմատ՝ 22,3 տոկոսով։

Երեւանից հետո, ամենաթանկ բնակարանները փետրվարին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է 292 հազար դրամ։ Աբովյանում եւ Վաղարշապատում (Էջմիածնում) 1 քմ գինը 153 հազար հազար դրամ է կազմել, Նոր Հաճընում՝ 128 հազար դրամ, Եղեգնաձորում եւ Արմավիրում՝ 120 հազար դրամ, Գորիսում՝ 118 հազար դրամ, Իջեւանը 117 հազար դրամ 1 քմ դիմաց ցուցանիշներով։

2013-ի փետրվարին Հայաստանում գրանցվել է անհատական տների առքուվաճառքի 399 գործարք, որից 104-ը՝ Երեւանում։ Մայրաքաղաքում անհատական տների առքուվաճառքի գործարքների քանակը 2013-ի հունվարի համեմատ աճել է 22,4 տոկոսով, իսկ մարզերում՝ 29,4 տոկոսով։ 2012-ի փետրվարի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում աճել է 31,6 տոկոսով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 16,6 տոկոսով։ Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2012-ի փետրվարին հունվարին համեմատ աճել են 0,5 տոկոսով։ Ըստ Երեւանի վարչական շրջանների, գներն այսպիսին են եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | փետրվար 2012 թ. | փետրվար 2013 թ. | հունվար 2013 թ. |
| Կենտրոն | 459000 | 473000 | 471100 |
| Արաբկիր | 365000 | 379800 | 378100 |
| Քանաքեռ Զեյթուն | 274700 | 292300 | 291100 |
| Նորք-Մարաշ | 301050 | 315500 | 314000 |
| Ավան | 249000 | 268250 | 267050 |
| Էրեբունի | 219500 | 237000 | 235000 |
| Շենգավիթ | 239300 | 252500 | 251000 |
| Դավթաշեն | 257500 | 273200 | 271700 |
| Աջափնյակ | 236300 | 247000 | 244100 |
| Մալաթիա-Սեբաստիա | 220000 | 235600 | 234300 |
| Նուբարաշեն | 144800 | 148000 | 147600 |
| Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից) | 269700 | 283800 | 282300 |

Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները։ Այստեղ միջին գները փետրվարին հունվարի համեմատ աճել են 0,2 տոկոսով։ Ամենաթանկ անհատական տները Երեւանից հետո Ծաղկաձորում են՝ 1 քմ-ն 303 հազար դրամ։ Երկրորդը Աբովյանն է՝ 1 քմ-ն՝ 154 հազար դրամ, երրորդը՝ Վաղարշապատը, որտեղ 1 քմ-ն կազմել է 152 հազար դրամ։ Ապա գալիս են Աշտարակը՝ 135 հազար դրամ, Նոր Հաճընը եւ Գորիսը՝ 129 հազար դրամ, Իջեւանը՝ 122 հազար դրամ, Բյուրեղավանը՝ 120 հազար դրամ, Ջերմուկը՝ 116 հազար դրամ 1 քմ դիմաց։

Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2013-ի փետրվարին 2012-ի փետրվարի համեմատ, հողերի առքուվաճառքի գործարքների քանակն աճել է 8,5 տոկոսով, աճուրդով վաճառքներինը նվազել 25 տոկոսով։

2013-ի փետրվարին, 2013-ի հունվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 37,8 տոկոսով, իսկ 2012-ի փետրվարի համեմատ՝ 42,1 տոկոսով։

Փետրվարին իրականացվել են հիփոթեքային գրավադրման 102 գործարքներ, որից 62-ը՝ Երեւանում։ Հունվարի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը Երեւանում աճել է 47,6 տոկոսով, իսկ մարզերում՝ 48,1 տոկոսով։ 2012-ի փետրվարի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը Երեւանում աճել է 3,6 անգամ, իսկ մարզերում՝ 13,3 անգամ։

Այսպիսով, անշարժ գույքի շուկայում փետրվարին գների էական փոփոխություն դարձյալ տեղի չի ունեցել, սակայն գործարքների քանակի աճ է արձանագրվել թե՛ հունվարի, թե՛ անցյալ տարվա փետրվարի համեմատ։ Գործարքների քանական աճի միտումը շարունակվելու դեպքում կսկսեն աստիճանաբար աճել նաեւ անշարժ գույքի գները։ Սակայն մեկ ամսվա ցուցանիշներով հնարավոր չէ եզրակացնել գործարքների քանակի աճը միտում կդառնա՞, թե՞ ոչ։

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԿԱԼԻՖՈՌՆԻԱ

## Մեծարել են ուսուցիչներին

Մարտի 16-ին ՀԲԸՄ Մանուկյան-Տեմիրճյան վարժարանի եւ ՀԲԸՄ Մելգոնյան սանուց միության համատեղ կազմակերպությամբ Կալիֆոռնիայի «Կանգա պարկի» Նազարյան կենտրոնում տեղի է ունեցել հատուկ միջոցառում, որի ընթացքում «Սբ Սահակ եւ Սբ Մեսրոպ Մաշտոց» մեդալով պարգեւատրվել են վաստակաշատ ուսուցիչ-դաստիարակներ **Գեւորգ Հակոբյանը**, **Հերմինե Սահակյանը** եւ **Զարմուհի Մինասյանը**, որոնք ավելի քան քառորդ դար ծառայել են հայկական համայնքին։

Ժամերգությունը, ըստ ստացված հաղորդագրության, կատարել է Ամերիկայի արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը, որից հետո մեկուկես ժամ տեւած գեղարվեստական ծրագրի ընթացքում հանդես են եկել ՀԲԸՄ-ի փոխնախագահ եւ դպրոցների հովանավորների վարչության ատենապետ **Սինան Սինանյանը**, որն անդրադարձել է ՀԲԸՄ-ի կրթական դերի կարեւորությանն ու բարձր գնահատել երեք նվիրյալ դաստիարակներին, պատվո արժանացած ուսուցիչ-ուսուցչուհիները եւ ավագ դասարանի աշակերտուհի Անիսա Յուսեֆին (երգ)։

Ծրագիրը վարել է Մանուկյան-Տեմիրճյան վարժարանի հայկական բաժնի վարիչ **Հրաչ Սեփեթճյանը**։

Հ. Ծ.

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47։ Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.։
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան։ Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 28.3.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2։